



ԼԵՅՍ

ԿՐԹՆԵԿԱՆ, ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ Ս. ԳՐԱՅԻՆ
ՊԱՇՏՈՆԵԿԱՆ ԵՐԿԱՄԱԼՈՒԹԵՐԹ
ԳԸՆՏԱՏՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԼՆ



LUYS — Revue bimestrielle

Prélature Arménienne du Canada

Rédacteur : Papken Topjian

3401 Olivar-Asselin, Montréal, Qc. Canada H4J 1L5

Tél.: (514) 856-1200 • Fax : (514) 856-1805

Courriel : prelacy@armenianprelacy.ca



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՏՕՆ՝ ՍՐԲՈՅՆ ԼՈՒՍԱԻՈՐԶԻ ԵԼԱՆԵԼՈՅՆ
Ի ԽՈՐ ՎԻՐԱՊԷՆ

Վաչէ Ծ. վրդ. Իգնատիոսեան

ՀՐԵՇՏԱԿ ՄԸ ՊԱՅՄԱՆ ՉԷ
ՈՐ ԹԵԻԵՐ ՈՒՆԵՆԱՅ

Աբել քհնյ. Մանուկեան

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՍԻՆ

Փիւլլիուս Լանթիլիւս

ԵՐԿՆԱՔԱՂԱՔԱՅԻՔ

Յակոբ Արք. Գլնճեան

ՎԱՆՔԵՐՈՒ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ

Սարգիս Պալեան

ՇԱՀԱՆ Ռ. ՊԷՐՊԷՐԵԱՆԻ
ՇԱՀԵԿԱՆ ԳՐՔՈՅԿԸ

Զենոբ Ա. քհնյ. Նալպանտեան

ԼՈՒՍԱԻՈՐԶԻ ԿԱՆԹԵՂԸ

Թորգոմ Փօսթաճեան

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Հ. Եփրեմ Տէր Ղազարեան

ՏՕՆ՝ ՍՐԲՈՅՆ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵԼԱՆԵԼՈՅՆ Ի ԽՈՐ ՎԻՐԱՊԷՆ

«Ահաւասիկ ես եւ այն գաւակները, գորս Տէրը ինձի տուաւ նշաններ եւ սփանջելիքներ ըլլալու Իսրայէլի մէջ» (Յսա. Ը. 18):

Այսպէս, կ'ըսէ Նսայի մարգարէն երբ կ'ընդունի նոր առաքելութիւն մը, որով ինքը եւ իր գաւակները նշաններ եւ հրաշքներ պիտի ըլլային Իսրայէլի մէջ:

Այսօր երբ կը տօնենք մեր բազմաչարհար հաւատքի հօր՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի ելանելոյն ի խոր վերապէն, որ իր սոսկալի չարհարանքներով եւ խորվիրապի 13 տարիներու ճգնողական եւ ապաշխարանքի կեանքով մեզի՝ իր գաւակներուն գերագոյն դասը տուաւ իբրեւ նշան եւ սքանչելիք մը ըլլալով եւ ապա իր գաւակներն ալ իրեն պէս դարերու ընթացքին սոսկալի չարհարանքներու ենթարկուեցան, բայց Աստուածային հրաշքով ազատուելով՝ գոյատեւեցին: Եւ այսօր իբրեւ ամբողջ ազգ մը, մեր կարգին նշան մը եւ սքանչելիք մը եղած ենք համայն աշխարհին թէ՛ հայ ժողովուրդը կայ եւ պիտի ապրի յաւէտ: Քանի որ մենք զմեզ կը դաւանինք աշխարհի առաջին քրիստոնեայ պետական ժողովուրդը եւ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի գաւակները, եւ Աստուածային նախախնամութեամբ կարելի չէ որ առաջին քրիստոնեայ ժողովուրդ մը վերցուի, անհետանայ աշխարհի վրայէն, բնաւ երբեք, ապացոյց՝ մեր բազմաչարհար Հայրապետը՝ Սբ. Գրիգոր Լուսաւորչի:

Իսրայէլի պատմութեան մէջ, երբ Աստուած իր մարգարէները պիտի դրկէր առաքելութեան մը, նախ՝ այդ առաքելութեան խորհրդանիշը կ'ընէր զանոնք, եւ ապա՝ անոնցմով իր հրաշքները եւ սքանչելիքները ցոյց կու տար նախ՝ Իսրայէլի ժողովուրդին ապա՝ համայն մարդկութեան:

Ա.- Այսպէս, Մովսէս Մարգարէն, Իսրայէլ ժողովուրդին ազատիչը, երբ ծնաւ՝ իր ծնողքը երեք ամիս զաղտնաբար պահեցին, վասնզի տղան գեղեցիկ տեսան, յետոյ սակայն, վախնալով թագաւորի հրամանէն, կողովի մը մէջ դրին գետեզերքը շամբին մէջ, ճիշտ այն ատեն երբ փարաւոնին աղջիկը գետեզերքը կը պտրտէր՝ տեսաւ կողովը, իր աղախիններուն հրամայեց որ կողովը իրեն բերեն: Երբ բացաւ՝ տղան կու լար: Գիտցաւ թէ եբրայեցի տղոցմէ է: Տղան շատ սիրեց եւ անունը Մովսէս դրաւ եւ իրեն որդեգիր ըրաւ. հետագային Իսրայէլի ժողովուրդը պիտի ազատագրէր Եգիպտոսի ծառայութեան երկրէն:

Բ.- Տէրը ըսաւ Նսայի մարգարէին. — «Գնա, մէջքէդ քուրճդ հանէ եւ ոտքէդ կօշիկներդ եւ ան այսպէս ըսաւ. կիսամերկ եւ բոկոտն կը շրջէր: Եւ Տէրը ըսաւ. Ինչպէս իմ ծառաս՝ Նսային երեք տարի մերկ ու բոկոտն շրջեցաւ, որ Եգիպտոսի եւ Եթովպիայի համար նշան ու ցոյց մըն է» (Յսա. Ի. 2-3):

Գ.- Ինչպէս Յոբ արդարը, որ իր բոլոր դժբախտութեան մէջ, առանց տրտնջալու համբերեց մինչեւ վերջը: Եւ այս համբերութեան համար Տէրը զինք օրհնելով՝ վարձատրեց բազմապատիկ կերպով եւ Յոբ աշխարհի պատմութեան համբերութեան չափանիշ դարձաւ:

Դ.- Եզեկիէլ մարգարէն կ'ըսէ Իսրայէլի ժողովուրդին. «Ես ձեզի համար նշան եմ» (Եզկ. ԺԲ. 11):

Ե.- Նոյնպէս, Յովնան մարգարէն կէտ ձուկի փորին մէջ մնալէ ետք երեք գիշեր եւ երեք ցերեկ Նինուէ գնաց եւ Նինուէցիներուն ապաշխարութիւն քարոզեց, որոնք իրեն հաւատալով՝ դարձի եկան, թագաւորէն մինչեւ շինականը: Յովնան մարգարէն Նինուէցիներուն ապաշխարութեան նշան դարձաւ:

Զ.- Յիսուս մանուկ երբ քառասնօրեայ տաճարը ընծայուեցաւ, Միմէոն ծերունին գիրկը առնելով՝ օրհնեց եւ ապա ըսաւ. «Ահաւասիկ այս մանուկը Իսրայէլի մէջ շատ մը մարդոց իյնալուն եւ ելլելուն համար եւ հակառակութեան նշան մը ըլլալու համար կեցած էր» (Ղկս. Բ. 34):

Է.- Վերջապէս, Պօղոս առաքեալ պիտի ըսէր գաղատացիներուն: «Ասկէ ետքը, մէկը զիս թող չյողենցնէ, վասնզի ես Տէր Յիսուսի վէրքին նշանները իմ մարմնիս վրայ կը կրեմ» (Գաղ. Զ. 17):

Ահաւասիկ եօթն մարգարէներու նշաններ, որոնք մեր բազմաշարժար Հայրապետին՝ Գրիգոր Լուսաւորիչին ամբողջ կեանքը կը բնորոշեն:

Մեր այսօրուան պատմութեան երկու հերոսները՝ Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եւ Տրդատ Գ. թագաւորը, որոնք իրենց մանկութեան շրջանին, սուրի կոտորածէ միայն իրենք ազատեցան նախախնամութեան շնորհիւ: Գրիգոր՝ որ Սուրէն կը կոչուէր, որդին էր Անակին, որ դաւադրութեամբ սպանած էր հայոց խոսրով Բ. Արշակունեաց թագաւորը որսորդութեան ժամանակ: Թագաւորը իր հոգեվարքին մէջ հրաման ըրաւ որ սրէ անցնեն Անակի ամբողջ ազգատոհմը: Այս սպանդէն փրկուեցաւ Սուրէնը իր ստնտուին շնորհիւ որ զինք Կեսարիա փախցուց եւ հոն մկրտուելով՝ Գրիգոր կոչուեցաւ կրթութեամբ քրիստոնէական կրթութեամբ, այս շրջանին Կեսարիա քրիստոնէական մեծ կեդրոն դարձած էր:

Նմանապէս Տրդատ ալ պարսիկներու սուրի սպանդէն ազատուեցաւ իր դայեակին շնորհիւ եւ փախցուեցաւ հռովմէական բանակը, ուր մնաց եւ դաստիարակուեցաւ հռոմէական կրթութեամբ:

287-ին Հռովմի Դիոկղետիանոս կայսրը մեծ հանդիսութեամբ թագադրեց հայոց Տրդատ Գ. թագաւորը եւ հսկայ բանակ մը յանձնելով՝ զրկեց զինք իր պապերուն երկիրը, Հայաստան աշխարհը: Այս անգամ պարսիկները չարաչար պարտուեցան եւ Տրդատ տիրացաւ իր հօրենական ժառանգութեան:

Գրիգոր ալ մտած էր Տրդատի բանակը իբրեւ քարտուղար արքային: Քանի մը պատճառներ ցոյց կը տրուի Գրիգորին այս արարքին համար: Ոմանք կը կարծեն թէ՝ Գրիգոր ուզած է իր հօր՝ Անակի տիրասպանութեան փոխարէն հատուցում մը ընել: Իսկ ուրիշներ կը կարծեն թէ Գրիգոր հետեւեցաւ Տրդատին եւ մտաւ Հայաստան քրիստոնէական քարոզչութեան եռանդէն մղուած: Կարելի է այս երկուքն ալ ունէր իր սրտին մէջ:

ԳՐԻԳՈՐԻ ԶԱՐԶԱՐԱՆՔՆԵՐԸ

Տրդատ յաղթանակով մտած էր Հայաստան եւ դեռ մայրաքաղաք չհասած՝ ուզած էր հանդէսներ եւ տօներ սարքել իր յաջողութեան համար: Ամբողջ բանակը կը գտնուէր Եկեղեցաց գաւառի Երիզա աւանին մէջ, այժմու Երզնկայի քով, ուր կը գտնուէր հայոց յայտնի աստուածուհիին՝ Անահիտի մեհանը: Տրդատ հրաման ըրաւ պաշտօն մատուցանել հայոց մեծ դիցուհիին, ինչպէս միւս աստուածներուն ի նշան երախտագիտութեան: Գրիգորի ալ յանձնարարեց ծաղկէ պսակ եւ թաւ ոստեր նուիրել Անահիտի: Գրիգոր մերժեց կատարել անոր հրամանը: Տրդատ իրեն սեղանակից ունենալով՝ նախարարներ, իշխաններ, զօրավարներ, եւ այս բոլորն ալ գինովցած վիճակ ունէին: Թագաւորը իր գինով վիճակին մէջ հրամանը կրկնեց, թերեւս գիտնալով որ Գրիգոր քրիստոնեայ էր: Նախ աշխատեցաւ համոզիչ խօսքերով ողորդել, ապա բարկանալով՝ ըսաւ. Օտարական մըն էիր, եկար յարեցար մեզի, եւ երկար տարիներ ալ հաւատարմօքն մեզի ծառայեցիր եւ ես գոհ էի քու աշխատանքէդ: Բայց ահա այժմ կը հակառակիս իմ կամքիս, եւ չես ուզեր յարգել այն աստուածը՝ զոր ես կը պաշտեմ:

Գրիգոր պատասխան տուաւ եւ ըսաւ. ծառաները պէտք է հնազանդին իրենց տէրերուն, ասիկա աստուածային հրաման է. ես կատարած եմ այդ հրամանը ծառայելով քեզի, բոլոր կարողութեամբս, ինչպէս դուն ալ կը վկայես: Բայց Աստուծոյ պատիւը ու պաշտօնը ոչ ոք կարելի է տալ, վասնզի Ան է միակ արարիչը բոլոր ստեղծուածոց: Զայն միայն պէտք է պաշտել եւ Անոր կամքը կատարել:

Այս պատասխանին վրայ Տրդատ զայրանալով՝ ըսաւ. Գիտցիր որ քու աշխատանքներդ ոչինչ են ինծի համար: Քեզի կը սպասէ կեանքի տեղ նեղութիւն, պատիւի տեղ՝ անարգանք, վարձատրութեան տեղ՝ բանտ եւ կապանք, եթէ յանձն չառնես պաշտել չաստուածները: Մանաւանդ այս Անահիտ մեծ Տիկինը՝ որ փառք ու ասպրեցուցիչն է մարդկային ազգին, եւլն.:

Գրիգոր միեւնոյն պաղարիւնութեամբ շարունակեց. ես քեզի ծառայեցի հաւատարմութեամբ: Քեզմէ վարձատրութիւն չէի ակնկալէր: Իրական հատուցումը Աստուծմէ է: Ով որ կը մեռնի ճշմարտութեան համար՝ ան կ'ապրի: Նաեւ ինչ որ դուք կը կոչէք Անահիտ մեծ Տիկին, թերեւս մէկը եղած է այն սովորական մահկանացուներէն՝ զորս ապա մարդիկ իրենք աստուածացուցած են, մեհաններ կանգնելով եւ երկրպագելով անոր: Դուք կը պաշտէք նրթեղէն աստուածներ, իսկ մենք կ'երկրպագենք կենդանի Աստուծոյ եւ յարուցեալ Յիսուսին:

Տրդատ զայրացաւ եւ ծաղրելով՝ ըսաւ Գրիգորին.

Ո՞վ է այդ Յիսուսը, գերեզմանին շահապետը՝ որուն կը ցանկաս միանալ: Այո, ըսաւ Գրիգոր, գերեզմանի շահապետը, որ սակայն Յարութիւն եւ Կեանք է: Բանավէճը դեռ երկարեցաւ եւ թագաւորը հրամայեց որ Գրիգորը դուրս հանեն խնջոյքի վրանէն եւ աներեւակայելի չարչարանքներու ենթարկուի, որոնց թիւը տասներկուք են, որոնք ակնատեսի վկայութեամբ արձանագրուած են արքունի դիւանապետ, Ագաթանգեղոս պատմիչի կողմէ:

Գրիգոր ամէն տեսակ ահաւոր չարչարանքներու ենթարկուեցաւ: Այնպիսի չարչարանքներ, որոնցմէ մէկը միայն կրնար սպաննել ոեւէ սովորական մահականացու մը: Չարչարանքներ, որոնք եօթն օրեր տեսցին. եւ ամէն չարչարանքներէ հտք կը հարցնէր Տրդատ Գրիգորին. Պիտի կատարե՞ս կամքս, ու պաշտես չաստուածները, որոնք մեր երկրին կեանք ու շինութիւն են:

Ս. Գրիգոր կը պատասխանէր. Քանի դեռ շունչ ունիմ մարմնոյս մէջ, բնաւ չեմ փորձուիր պաշտել այդ քարեղէն չաստուածները:

ԺԱ. չարչարանքէ հտք Տրդատ ըսաւ. Կը տեսնե՞ս, Գրիգոր, որ քու սնոտի յոյսդ չկրցաւ քեզ փրկել իմ ձեռքէս:

Տես, կոչեց Գրիգոր, որքա՛ն աւելի սնոտի, ունայն են քու յոյսերդ, որոնք չկրցան դարձնել զիս ճշմարիտ հաւատքէս:

Բայց, գիտցիր որ Աստուած քեզ պիտի պատժէ ու դատապարտէ դժոխքի անշէջ կրակին մէջ, ուր յաւիտեան պիտի տանջուիս:

— Քանի որ այդպէս է, ըսաւ Տրդատ, քեզ անշէջ կրակով այրել պիտի տամ, ու տեսնե՞ք թէ քու Աստուածդ ի՞նչ պիտի կարենայ ընել:

ԺԲ. չարչարանքը կ'ըլլայ երկաթէ կաթսաներու մէջ կապար հալեցնել եւ հեղուկ վիճակի մէջ թափել Գրիգորի մարմնի վրայ: Հրամանը կը կատարուի, Գրիգորի ամբողջ մարմինը կ'այրի, բայց կենդանի կը մնայ: Ինչպէս ըսինք, այս բոլոր չարչարանքները նկարագրուած են Ագաթանգեղոսի վկայութեամբ, որ թագաւորին պատմագիրն էր: Ուստի ասոնք առասպելներ չեն, քանի իր հրէից պատմութեան մէջ կը հանդիպինք նոյն տեսակ դէպքին, Սեդրակ, Միսաք եւ Յաբեթնագով, որոնք կրակէ հնոցին մէջ նետուեցան եւ հրաշքով միայն իրենց ձեռքին կապերը այրեցան եւ ազատ համարձակ կը շրջէին կրակին մէջ:

Նմանապէս Յովհաննէս Աւետարանիչ իր խոր ծերութեան շրջանին եռացած կաթսային մէջ նետեցին մեռցնելու համար, բայց հրաշքով ազատեցաւ: Տրդատ շճած հարցուց Գրիգորին. Այսքան ահաւոր եւ մահասարսուռ տանջանքներէն հտքը, ինչպէ՞ս տակաւին կ'ապրիս:

Գրիգոր Սբ. Հոգիով զօրացած՝ պատասխանեց.

— Սկիզբէն իսկ քեզի չյայտնեցի՞ թէ Աստուած կը զօրացնէ իրեն համար չարչարուողները եւ ամօթով կը ձգէ քեզի նմանները, որոնք կը փորձեն մարտնչիլ իր ոյժին դէմ:

Այս խօսքերը արքային ջիղերը թունդ հանեցին: Նոյն պահուն Աշոցի Տաճատ իշխանը, որ Կեսարիա ապրած էր եւ տեղեակ էր Գրիգորի նախընթաց կեանքին, մօտեցաւ Տրդատին ու ականջին փսփսաց. — Տէր արքայ, Գրիգոր քու հայրդ անգթօրէն սպաննող մահապարտ Անակ Պարթեւի որդին է, այնպէս որ պէտք է մահուամբ պատժես զայն: Տրդատ ուղղակի մոլեգնեցաւ: Անմիջապէս հրամայեց դաւաճանի որդին Արտաշատի խոր վիրապը նետել, որ մահապարտներու համար սահմանուած խաւարապատ եւ սարսափազդու արգելարան մըն էր:

Հրամանը վայրկեանին գործադրուեցաւ եւ Գրիգոր կը դառնայ բնակիչը զազիր ու գարշելի կենդանիներով լեցուն խոր վիրապին, ուր նետուած ոեւէ մահապարտ դատապարտուած էր անօթի ու ծարաւ մնալու եւ հազար տե-

սակ տառապանքներով ու տուայտանքներով հոգին փչելու:

Գրիգոր աստուածային նախախնամութեամբ անվնաս ապրեցաւ այս խորվիրապին մէջ 13 տարիներ: Ըստ աւանդութեան, բարեպաշտ կին մը, ամէն օր մայրամուտի պահուն, նկանակ մը հաց եւ գաւաթ մը ջուր կ'իջեցնէր խորվիրապի բնակիչին: Միայն հաւատարիմ բերդապահ մը կար, որ տեղեակ էր այս գաղտնիքին:

Այս հացը եւ ջուրը կը խորհրդանշէ Քրիստոսի Մարմինը եւ Արիւնը, որով Սբ. Գրիգոր ապրեցաւ հաղորդութեամբ խորվիրապին մէջ:

Այս մէկն ալ առասպել չթուելու համար ըսենք թէ Ֆրանսայի մէջ 1981, 6 Փետրուարին, 80 տարեկանին մահացաւ Մարթը Ռօպին, որ կ'ապրէր Տոմի նահանգին Շաթօնէոֆ-դը-Կալօր, որ շատ խոր հաստացեալ մըն էր եւ տեսիլքներ կը տեսնէր: 30 տարեկանին անդամալոյծ մնաց եւ 50 տարիներ միմիայն սուրբ հաղորդութեամբ ապրեցաւ: Անհաւատալի է, բայց իրաւ: Որուն մասին ակադեմիկոս Ժան Կիթթոն գիրք մը գրեց (1):

Այս գարշելի խորվիրապին մէջ, աննկուն կամքով եւ անպարտելի հաւատքով մը տոգորուած՝ Գրիգոր մեծ համբերութեամբ ապրեցաւ: Ճշմարտութեան լոյսէն լուսաւորուած՝ անդադար աղօթեց, եւ լալազին աչքերով, միշտ ծնրադիր ու բազկատարած, խօսեցաւ Աստուծոյ հետ, եւ լուսաւոր տեսիլքներով վերացած՝ սպասեց այն վաղուան ծագելիք արշալոյսին՝ որ իր փրկութեան եւ միանգամայն իր առաքելութեան ճամբան պիտի բանար: Ներքեւը քար մը կայ երկու մաշած տեղերով, որ ցոյց կը տրուի իբր Գրիգոր Լուսաւորչի ծնրադրութեան հետքեր:

Սուրբը ամէն օր կ'ընդունէր հրեշտակի մը այցելութիւնը: Այս հրեշտակը կը բացակայի Համբարձման չորրորդ օրը, որ կ'ընէ Կիրակի, Բ. Մաղկազարդ: Երբ յաջորդ օրը հրեշտակը կ'այցելէ՝ կը բացատրէ իր բացակայութեան պատճառը, թէ՛ Քրիստոսի Համբարձումը տօնելու համար՝ հրեշտակներու դասերէն իւրաքանչիւրը օր մը հանդէս կը կատարէ, եւ ինքն ալ Դ. դասէն ըլլալով՝ Դ. օրը չէր ուզած իր Դասի հանդէսէն բացակայիլ:

ԳՐԻԳՈՐ ԽՈՐ ՎԻՐԱՊԷՆ ԿԸ ՀԱՆՈՒԻ

Հռիփսիմեանց կոյսերուն նահատակութիւնը խոր ազդեցութիւն գործեց Տրդատի վրայ: Տրդատ օրէ օր ջղայնանալով՝ գայլախտի հիւանդութիւնը ունեցաւ եւ սկսաւ խոզակերպ լեռներու եւ անտառներու մէջ շրջիլ:

Այս ատենները Տրդատի քոյրը Խոսրովիդուխտ երազ մը տեսաւ, որուն մէջ իրեն յայտնուեցաւ թէ իր եղբայրը կ'առողջանայ երբ Գրիգոր Խոր Վիրապէն դուրս հանուի: Խոսրովիդուխտ նախ՝ չհաւատաց. բայց երբ երազը կրկնուեցաւ քանի մը անգամ, ապա՝ Օտա Ամատունին զրկեց Խոր Վիրապը՝ հասկնալու համար թէ Գրիգորը ո՞ղջ է:

Օտա Ամատունին Խոր Վիրապ գնաց եւ ձայն տուաւ Գրիգորին, ըսելով. Գրիգոր, ողջ ես: Գրիգոր պատասխանեց. Ողջ եմ: Շուտով դուրս հանեցին

զինք: Գրիգոր աղօթեց Տրդատի վրայ, եւ բժշկեց զայն իր հիւանդութենէն, ինչպէս նաեւ ուրիշ հիւանդներ: Տրդատ քրիստոնեայ դարձաւ: Իսկ Գրիգորի առաջին գործը եղաւ Հոփսիսիմեանց կոյսերուն ոսկորները ամփոփել եւ անոնց վրայ վկայարան մը կանգնել:

Տրդատի հետ միասին շատ նախարարներ ու մեծամեծներ քրիստոնէութիւնը ընդունեցին: Ապա Տրդատ հրովարտակ մը հանելով՝ քրիստոնէութիւնը Հայաստանի համար ազգային ու պետական կրօնք հռչակեց 301-ին:

Գրիգոր ազատ համարձակ սկսաւ քարոզել Քրիստոսի Աւետարանի լոյսը, եւ զայն տարածեց Հայաստան աշխարհին մէջ:

ԳՐԻԳՈՐ ԿԸ ԶԵՌԵԱԴՐՈՒԻ ԻԲՐԵՒԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՒ ԷԶՄԻԱՇԵՆԻ ՏԱՃԱՐԻՆ ԹԻՆՈՒԹԻՒՆԸ

Տրդատ թագաւորը հայոց մեծամեծները հաւաքելով՝ ժողով մը գումարեց, ուր որոշեցին Գրիգորը եպիսկոպոս ձեռնադրել տալ Կեսարիոյ մէջ: Գրիգոր ընդունեց ժողովին որոշումը եւ Կեսարիա գնաց եւ այն տեղ եպիսկոպոս ու կաթողիկոս ձեռնադրուեցաւ Ղեւոնդիոս Արքեպիսկոպոսէն 302 թուին, եւ Հայաստան վերադարձաւ մեծ շուքով:

Օր մը Սուրբ Գրիգոր տեսիլք մը ունեցաւ, որուն մէջ Աստուծոյ Միածին Որդին՝ Յիսուս, երկինքէն երկիր իջնելով՝ իրեն ցոյց տուաւ Էջմիածնի Մայր Տաճարին տեղը, այնտեղ կառուցանելու համար Հայաստանեայց առաջին կաթողիկէ եկեղեցին: Սբ. Գրիգոր Հայրապետը պատմեց այս տեսիլքը Տրդատ թագաւորին եւ նախարարներուն, որոնք անմիջապէս գործի ձեռնարկեցին շինելու Տաճարը 303-ի Փետրուարին եւ աւարտեցաւ Օգոստոսին: Օծումը կատարուեցաւ Օգոստոս 15-ին, Ս. Աստուածածնայ Վերափոխման Կիրակի օրը, եւ կոչուեցաւ Սուրբ Աստուածածին: Սակայն, հայ ժողովուրդը սիրած է զայն կոչել Սուրբ Էջմիածին յաւերժացնելու համար Միածին Որդւոյն տեսլային իջման յիշատակը:

Ս. Գրիգոր Հայրապետը Հայաստանի մէջ քարոզեց շարունակ եւ մեհեանները քանդելով՝ նոր նոր եկեղեցիներ կը հաստատէր ամէն տեղ: Եկեղեցիներու պաշտօնեաներ կը ձեռնադրէր եւ դպրոց մըն ալ բացաւ կրթելու համար քուրմերուն զաւակները, իբրեւ ապագայ պաշտօնեաներ եկեղեցւոյ: Միւս կողմէ դարձի եկան մեծ թիւով հայեր, որոնք խումբ խումբ մկրտուեցան Գրիգորի ձեռամբ եփրատ գետին եզերքը: Տրդատ թագաւոր, Աշխէն թագուհին, Խոսրովիզուխտ եւ բոլոր պալատականները եւս մկրտուեցան իրենց կարգին: Մկրտուողներուն թիւը 4 միլիոն էր, կ'ըսէ Ագաթանգեղոս պատմիչը:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿՈՐԻԶԻ ԴԵՐԸ

Արդարեւ եւ իրաւամբ, մեր Ս. Գրիգոր Լուսաւորիչը հայ ժողովուրդին համար եղաւ գերագոյն նշանը իր սոսկալի չարչարանքներով, իր սրբակեաց

կեանքով, հաւատքով, սիրով, քաջութեամբ եւ վերջապէս իր յաղթանակով: «Հայց. Եկեղեցիի համար եղաւ մեծագոյն գործիչը եւ աւետարանիչը, այն աստիճան որ հետեւողութեամբ “Երեքտասաներորդ” Պօղոս Առաքեալի՝ ինքն ալ կոչուեցաւ “Չորեքտասաներորդ Առաքեալ”», կ'ըսէ Ամենապատիւ Տ. Շնորհք Պատրիարք Գալուստեան (2): Ապացոյց՝ Միջին Դարուն Հայկական մանրանկարչութեան մէջ, երբ մեր ծաղկող նկարիչները կը նկարէին Քրիստոսի երկրորդ գալուստը, այսպէս, Քրիստոս նստած՝ իր չորեքկերպեան կենդանեաց աթոռին վրայ, իր 12 Առաքեալներով եւ մէջտեղը՝ իբրեւ Առաքեալ՝ Սբ. Գրիգոր Լուսաւորիչը (Երուսաղէմ Ս. Յակոբ, թիւ 3815, Աւետարան 1455 թ., ծաղկող՝ Մինաս, տեղ՝ Արճէշ, էջ 37 (Վերջին Դատաստան)):

Հայ ժողովուրդը, այսինքն՝ իր զաւակները, այնքան սիրած է իր Լուսաւորիչ Հայրապետը, որ ինքզինքը կոչած է «Լուսաւորչական»: Սակայն, պէտք է ուշադրութիւն ընել այս մակդիրը գործածելու ատեն օտարներուն հետ, որոնք պիտի թարգմանեն Կրէկօրիէն, ինչ որ սխալ է այս կոչումը, քանի որ մեր Հայց. Եկեղեցին Առաքելահիմն է՝ Թաղէոս եւ Բաթղղիմէոս երկու առաքեալներուն կողմէ հիմնուած եւ առաջին լուսաւորիչները եղած են մեզի համար, իսկ Ս. Գրիգոր Լուսաւորիչ երկրորդ Լուսաւորիչը եղած է, կազմակերպելով Եկեղեցին եւ պետական կրօնք դարձնելով Քրիստոնէութիւնը:

Ս. Գրիգոր Լուսաւորիչի կեանքը, քարոզութիւնը եւ գործունէութիւնը միշտ առաջնորդուեցաւ Քրիստոսի Աւետարանի լոյսով: Եւ ասոր համար արժանացաւ այս երանելի տիտղոսին: Մենք ալ իր զաւակները ըլլալով՝ պէտք է իր ոգիով հետեւինք իրեն, ամէն մարզի մէջ: Սակայն, դժբախտաբար պէտք է խոստովանինք թէ մեր մէջ ալ կան նոյնիսկ բարձրաստիճան եկեղեցականներ, որոնք երբ կը խօսին, կը գրեն կամ տեսակցութիւնը մը տան թերթի մը թղթակիցին՝ մեր Եկեղեցւոյ բարեկարգութեան կամ ապագայի մասին, մեր վրայ այն տպաւորութիւնը կը ձգեն որ անոնք ըլլային մէյ մէկ ընկերաբաններ կամ ազգային գործիչներ, որոնք պիտի խօսէին կամ արտայայտուէին որեւէ ազգային Միութեան կամ կազմակերպութեան մը մասին: Երբեմն պատէ պատ խօսքեր կ'ընեն, կամ ալ պարզ մտքի մարզանքներ ընելով՝ նորանոր տեսութիւններ կը յայտնեն մեր Եկեղեցւոյ մասին, որոնց մէջ հաւատքի նշոյն իսկ չի տեսնուիր, ոչ ալ՝ սիրոյ եւ զոհողութեան ոգին: Ինչպէս մենք կը դաւանինք թէ Եկեղեցին հիմնուած է հաւատքով եւ աղօթքով Քրիստոսի վրայ, սիրոյ եւ զոհողութեան ոգիով, որով բուն իսկ Մարմինը կը դառնայ: Եթէ ոչ՝ այն ատեն Եկեղեցին կը դառնայ որեւէ աշխարհիկ միութեան կամ կազմակերպութեան կարգին:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԻՆՉՈ՞Ւ ԿՈՐԾԱՆԵՑ ՄԵՀԵԱՆՆԵՐԸ

Երբ ազգովին քրիստոնէութիւնը ընդունեցինք, Ս. Գրիգոր, Տրդատ Թագաւորին եւ նախարարներուն հետ խորհրդակցելէ ետք, քանդել տուաւ բոլոր հեթանոսական մեհեանները եւ բազիլիկները: Որովհետեւ անոնց գոյութիւնը

պիտի քաջալերէր անկասկած տակաւին մնացած հեթանոսները, որոնք պիտի ուզէին շարունակել պաշտամունք կատարել այդ մեհակներուն մէջ իրենց չաստուածներուն, որով երկուութիւն եւ պայքար պիտի ստեղծուէր հայ ժողովուրդին մէջ, ինչպէս նաեւ գայթակղութիւն:

Մեր Տէրն ալ ըսած էր. «Արդ՝ եթէ աջ քեզ քեզ կը գայթակղեցնէ՝ հանէ զայն ու քեզմէ ձգէ ...: Եթէ աջ ձեռքդ քեզ կը գայթակղեցնէ՝ կտրէ զայն ու քեզմէ ձգէ. վասնզի աղէկ է քեզի համար որ անդամներէդ մէկը կորսուի քան թէ ամբողջ մարմինդ գեհնն նետուի (Մտթ. Ե. 29-30):

Նոյնը չէ, անշուշտ, քսաներորդ դարու հաւատացեալի մը համար, այդ մեհակները կամ բազինները, որոնք ոչ մէկ գայթակղութիւն կրնան պատճառել, որովհետեւ ոչ հետեւորդներ կան եւ ոչ ալ՝ պաշտամունք: Անոնք պարզապէս արուեստի կամ հնուիտեան աչքով միայն կրնան դիտուիլ:

Իսկ ամէնէն կարեւորը եւ էականը, մեր Գրիգոր Հայրապետը հոգիներու փրկութեան համար է որ այնքան սոսկալի չարչարանքներու ենթարկուեցաւ եւ 13 տարիներ խոր Վիրապին մէջ, եւ Աստուածային նախախնամութեան շնորհիւ եւ հրաշքով իր նպատակին հասաւ, ոչ թէ՛ միայն հոգիներ կրցաւ փրկել, այլ ամբողջ Հայոց աշխարհը քրիստոնեայ դարձուց:

Փա՛ռք, հա՛ղար փառք Աստուծոյ, որ այսպիսի Լուսաւորիչ Հայրապետ մը շնորհած է մեզի. Ամէն:

ՎԱԶԷ Ծ. ՎՐԳ. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ

ԾՆԹ.

1. Jean Guittou, «Portrait de Marthe Robin», Edition Grasset, Paris, 1985.
2. Շնորհիւ Արք. Գալուստեան, «Հայագգի Սուրբեր», Իսթաբուլ, 1982, էջ 19:



ՀՐԵՇՏԱԿ ՄԸ ՊԱՅՄԱՆ ՉԷ ՈՐ ԹԵՒԵՐ ՈՒՆԵՆԱՅ

Մարո Մանուեանին՝
Յոթելեանին առթիւ

«... Հրեշտակ ի մարդկանէ,
Մարմնատեսիլ ֆերովբէ»:
(Ս. Գր. Նարեկացի)

Մեր մանկութեան օրերէն իսկ լսած ենք հրեշտակներու մասին: Քանի՛ քանի անգամ մեր մայրերը, հակած մեր սնարներուն վրայ, մեր նիրհուն ականջներուն որքա՛ն անձկագին աղօթած են «Հրեշտակ զուարթուն»ը՝ այդ գերբնական ու սուրբ էակին պահպանութիւնը եւ զմեզ փորձանքներէ հեռու պահելու զօրութիւնը խնդրելով մեր ազազուն անձերուն համար: Պատանեկութեան տարիներուն, դպրոցական գրասեղաններու ետին, կրօնի դասերու ընթացքին ինչքա՛ն հրահրած է մեր երեւակայութիւնը լուսաւոր այն հրեշտակին կերպարը, որ նստած Յիսուսի թափուր գերեզմանին, իւղաբեր կանանց աւետիս տուաւ ըսելով. «Այստեղ չէ՛, այլ յարութիւն առաւ՛»:

«Հագարք հագարաց եւ բիւրք բիւրոց» աստղաբաշխական թիւ մը կը վերագրէ կրօնը անդրադառնալով հրեշտակներու թիւերուն, եւ զանոնք կը բաշխէ հիմնականօրէն երեքական դասերու՝ Աթոռքի, Քերովբէներու եւ Սերովբէներու: Տէրութիւններու, Զօրութիւններու եւ Իշխանութիւններու: Պետութիւններու, Հրեշտակապետերու եւ Հրեշտակներու:

Որքան ալ մարդուս երեւակայութիւնը նուիրապետական ձեւ մը տուած ըլլայ հրեշտակներու դասակարգումներուն եւ պաշտօններուն, միեւնոյնն է, անոնց գոյութիւնը կը կազմէ մեր հաւատքին բաղկացուցիչ եւ էական մէկ մասը: Հրեշտակապետաց ընդհանրացած անունները, զոր օրինակ Գաբրիէլ, Միքայէլ, Ռափայէլ եւ Ուրիէլ, ինչպէս նաեւ այս կարգին շարք մը ուրիշ անուններ, իրենց «էլ» վերջածանցով, յղացք մը եբրայերէն «էլոհիմ» բառի արմատէն՝ որ Աստուած կը նշանակէ, կու գան մատնացոյց ընելու այն մասին, թէ անոնք ուղղակի առնչուած են Աստուծոյ հետ:

Հայկազեան Բառագիրքը հրեշտակ բառին հետեւեալ բացատրութիւնները կու տայ. «պատգամաւոր երկնային», «դեսպան Աստուծոյ՝ զուարթուն երկնից», «սուրհանդակ», եւլն.: Յունարէն՝ «անգելոս», որմէ լատիներէն՝ «անգելուս», հայերէնի նման նոյնիմաստ նշանակութիւն ունին: Հրաչեայ Աճառեանի «Հայերէն Արմատական Բառարան»ը վերոյիշեալ «հրեշտակ» հասկացութիւնը լաւագոյնս կը ստուգաբանէ, զայն առնչելով պահլաերէնի «ֆրէշտակ» բառին, «ֆրա» բառարմատով եւ «էշ» մասնիկով կազմուած բառակապակցութիւն մը, որ «շտապել, շարժումի մէջ դնել եւ ուղարկել»:

այսինքն՝ «պատգամաւոր, առաքեալ կամ ուղարկուած» կը նշանակէ:

Հրեշտակները Աստուծոյ անմիջականութեան մէջ գտնուող գերբնական էակներ, Տիրոջ կամքը հիմնականօրէն մարդուն փոխանցող պատգամաբերներ կամ միջնորդներ են, որոնք Ս. Գրոց պատմութեան մէջ, տարբեր ժամանակաշրջաններուն, հանդէս եկած են զանազան դրսեւորումներով ու պաշտօններով:

Աբրահամ, երբ իր ամուլ կնոջ Սառայի խնդրանքով անոր եգիպտացի ստրկուհին՝ Հագարը ճանչցաւ, իսկ Հագար Աբրահամէ յղացաւ, մայր դառնալու իր ունեցած առաւելութեան համար իր տիրուհին արհամարհել սկսաւ: Սառա, որ Աբրահամի առաջին կինն էր եւ իշխանութիւն ունէր իր ստրկուհիին վրայ, չարչրկեց զայն: Հագար ճարահատելով փախուստի դիմեց եւ մինչ անապատին մէջ աղբիւրի մը քով կը գտնուէր, հրեշտակ մը երեւցաւ անոր, որ յորդորեց զինք վերադառնալ ու իր տիրուհիին մօտ շարունակել ծառայութիւնը²: Նախախնամութիւնը յատուկ ծրագիր մը ունէր նաեւ Հագարին համար, քանի որ Ան տեսած էր ստրկուհիին տառապանքը, հետեւաբար՝ զայն պիտի դարձնէր մայրը հսկայ սերունդի մը: Հետաքրքրական է, որ հոս, Ս. Գրոց պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, Հագար պատահած եղելութեան համաձայն ինքնութիւն կու տայ հրեշտակին զայն անուանելով. «Դու ես Աստուած որ հայեցար յիմ»³:

Յերեկուան տօթին, Աբրահամ նստած իր վրանի մուտքին հեռուն կը դիտէր, երբ նշմարեց, որ երեք անձեր իրեն կը մօտենային: Ան իսկոյն ընդառաջ գնաց, մինչեւ գետին խոնարհելով երկրպագեց անոնց, ընդհուպ այդ անծանօթ մարդոց Մամբրէի կողմնակող շուքին տակ ընտիր հիւրասիրութիւն մը պատրաստեց: Անոնք Տիրոջ պատգամաբեր հրեշտակներն էին, որոնք եկած էին Աստուծոյ յաւիտեանական ուխտը փոխանցելու անոր, թէ իր կինը՝ Սառան, անգամ յառաջացեալ տարիքին մէջ, պիտի յղանայ, որդի մը պիտի ծնի եւ Աբրահամ պիտի դառնայ հաւատքի սերունդներուն հայրը⁴:

Սողոմի ու Գոմորի կործանման եղելութիւնը մեզի դիտել կու տայ, թէ Տիրոջ հրեշտակը ոչ միայն աւետաբեր, այլ կրնայ աղէտաբեր առաքելութիւն մըն ալ ունենալ, երբ մարդ արարածը իր մեղքերով ոչ միայն իր անձին, այլ միաժամանակ իր նմանին ու շրջախարհի այլասերումին պատճառ կը դառնայ:

Ձառամած Սառայի յղանալու աւետիսը փոխանցող աւետաբեր հրեշտակները Աբրահամէն բաժնուելով միանգամայն ուրիշ առաքելութիւն մը ստանձնեցին Սողոմի ու Գոմորի ճամբուն: Անոնց ուղին հետզհետէ սահմուկեցուցիչ եւ կործանարար դիտաւորութիւն մը առաւ, երբ քաղաքի մուտքին կարծէք իրենց ժամանումին սպասող Ղովտէն դիմաւորուեցան, բայց չուտով զիրենք հիւրընկալող տան յարկին մէջ մեղքի բիրտ ուժին բախեցան: Հրեշտակները մէկ կողմէն հանդէս կու գային փրկարար դերով մը՝ անգամ դեռ տատամսող Ղովտն ու իր կինը իրենց դուստրերուն հետ փութով մը քաղաքէն հեռացնելու, միւս կողմէն ծծումբի կործանարար կրակներուն մէջ կը բնաջնջէին մեղքի աղտեղութենէն այլասերած քաղաքը՝ ողջ բնակիչներով⁵:

«Ետ մի՛ նայիր, կեանքը առջեւդ է, որ Աստուած շնորհեց քեզի»։ ա՛յս էր հրեշտակին պատգամը ստոյգ մահուընէ ազատած Ղովտին, կնոջն ու անոնց

Բեթել կը կոչէ, այսինքն՝ Աստուծոյ տուն: Բնականաբար, Աստուծոյ տան բնակիչներ եւ սպասաւորներ են Հրեշտակները, եւ ուր որ Աստուած է, հոն ներկայ են նաեւ Հրեշտակները: Այս իմաստով, Հրեշտակի մը ներկայութիւնը միաժամանակ Աստուծոյ յայտնութիւն կամ մօտութիւն կը խորհրդանշէ: Հրեշտակներու երեւումներուն առթիւ որքան ալ Հին Ուխտին մարդը «Աստուած տեսայ եւ ապրեցայ» կ'եզրակացնէ, միեւնոյնն է, կարելի չէ Հրեշտակ մը Աստուծոյ հետ նոյնացնել: Աստուած «Անհաս եւ անսկիզբ խորին խորհուրդ» է, Ս. Ներսէս Շնորհալի հայրապետին գեղեցիկ բացատրութեամբ, «Ինքն անպատճառ պատճառն է ամենայն պատճառաց»-ն է: Աստուած գերազանցապէս Արարիչն է ու միակը, մինչդեռ անգամ իր անմիջական մօտութեան մէջ եղող Հրեշտակները՝ բոլոր միւս գոյերուն նման արարածներ են:

Շարունակելով Հրեշտակներու եւ մարդոց միջեւ տեղի ունեցած հանդիպումներու ներկայացումը, իր ունեցած կարեւորութեան տեսակէտէ նուազ հետաքրքրական չէ յիշատակել նաեւ Յակոբի մենամարտը Աստուծոյ Հրեշտակին հետ: Փաստօրէն սոյն տեղեկութիւնը կը հանդիսանայ Հին Կտակարանի վերջին նկարագրութիւնը այն մասին, որ Հրեշտակ մը ուղղակի եւ Ֆիզիքապէս առնչութիւն կ'ունենայ մարդուն հետ: Անշուշտ պատիւ մը, որ իրենց առաջնորդական, մարգարէական եւ թագաւորական ամբողջ փառքին մէջ ո՛չ Մովսէսի եւ ոչ ալ Դաւիթի շնորհուեցաւ:

Յակոբ Լաբանի երկար տարիներ ծառայելէ ետք, որոշեց գաղտնաբար Միջագետքէն հեռանալ եւ վերադառնալ Քանանու երկիրը: Ռաբէլ, Յակոբի կինը, գողցած եւ իր հետ վերցուցած էր իր հօր՝ Լաբանի կուռքերը: Յարսի կիրճէն ու գետէն իր ընտանիքն ու ինչքերը անցընելէ ետք, երբ Յակոբ դեռ առանձին ափին միւս կողմը կը գտնուէր, մարդ մը սկսաւ իր հետ մարտնչիլ: Ըմբշամարտը երկարեցաւ ու արշալոյսը ծագելուն՝ այդ մարդը տեսաւ, թէ կարելի չեղաւ զգետնել Յակոբը, անոր զիստի ամուլալիզին հարուածեց եւ զայն ընդարմացուց: Ախոյեանը Յակոբէն խնդրեց, որ զինք արձակէ, քանզի արշալոյսը կը ծագէր ու ինք պէտք է շտապ հեռանար: Յակոբ դեռ եւս ամուր բռնած էր իր հակառակորդը ու անոր օրհնութիւնը ստանալու պարագային միայն կը համաձայնէր ազատ արձակել զայն: Յակոբի հետ մարտնչող այդ անծանօթը Տիրոջ Հրեշտակն էր, որ անոր անձին մէջ օրհնեց մարդու անկոտորում կամքը, պայքարելու անվեհեր ոգին ու նպատակին հասնելու աննահանջ ձգտումը, վերանուանելով զայն Իսրայէլ¹⁰, այսինքն՝ աստուածամարտ: Արդարեւ, այս միջոցէպէս սկսեալ, մարդ արարածը կարծէք ոչ միայն Աստուծոյ մարտակիր, այլ նաեւ գործակից ըլլալու կոչումն ընդունեց:

Բազաւամ Աստուծոյ կամքին հակառակ ընթացք մը որդեգրեց, ու Մովսէսի թագաւորի պնդումներուն տեղի տալով, ստիպուեցաւ երթալ Յորդանանի միւս կողմը՝ Մովսէսի դաշտերուն մէջ բնակութիւն հաստատած իսրայէլացիները անիծելու: Աւտու մը ան իր էջը թամբեց ու հեծնելով վրան երկու սպասաւորներու ուղեկցութեամբ ճամբայ ելաւ: Սակայն Աստուծոյ բարկացած Հրեշտակը, մահաբեր սուրը ձեռքին, կանգնած ճամբուն մէջտեղ կը սպասէր Բաղամամի անցնելուն,

որպէսզի զայն պատժէ: Բաղասամի էշը վտանգը տեսնելով ճամբէն շեղեցաւ ու դէպի արտը դնաց: Բաղասամ սկսաւ էշը ծեծել, վերադարձնելու համար զայն բուն ճամբուն: Քիչ ետք, Տիրոջ հրեշտակը, նոյնքան սպառնալից, երկու կողմերէն ցանկապատուած այգիներու արահետին մէջ կեցաւ: Այս անգամ ալ էշը փորձեց շրջանցել՝ ինքզինք ու Բաղասամի ոտքը սեղմելով ցանկապատին: Բաղասամ ոտքին ցաւէն ալ աւելի զայրացած՝ ճիպոտի ուժգին հարուածներ հասցուց խեղճ իշուն: Երբ նորէն փորձեցին ճամբորդութիւնը շարունակել, Տիրոջ հրեշտակը կանգնելով այս անգամ ալ փակեց այն նեղ անցքը, ուրկէ անոնք ստիպուած էին անցնելու: Եւ քանի որ ո՛չ շրջանցելու, ո՛չ շրջուելու եւ ոչ ալ աջ ու ձախ կողմերէն շեղելու կարելիութիւն կար, էշը ամբողջապէս գետին կքեցաւ ու անշարժ իր տեղը մնաց: Բաղասամ զայրանալով իր իշուն յամառութեան վրայ, սկսաւ զայն եւս քան զեւս ծեծել: Ահա Աստուած ճիպոտի հարուածներու ցաւէն չարչրկուած իշուն բերանը բացաւ, որ Բաղասամի ըսաւ. «Ի՞նչ ըրի քեզի, որ այս երեք անգամ է որ զիս կը ծեծես: Միթէ ես նոյն էշդ չե՞մ, որուն վրայ կը հեծնէիր մանկութենէդ մինչեւ այսօր. քեզի այսպէս ընելու սովորութիւն ունէի»⁶¹: Բաղասամի աչքերը իսկոյն բացուեցան եւ Տիրոջ հրեշտակը անոր հաւաստիացուց, թէ ան ստոյգ պիտի մեռնէր, եթէ զրաստը չզգաստանար ու զինք չպահէր վտանգէն⁶²:

Ի տարբերութիւն բանականութիւն չունեցող կենդանիին, մարդ արարածի աստուածատուր առաւելութիւնն է տեսնել ու ճանչնալ ճշմարտութիւնը: Առաւելութիւններուն զուգահեռ, նոյն գիտակցական մարդը ունի սակայն թերութիւն մը՝ սխալականութիւնը, կրօնական բառով՝ մեղանչականութիւնը, որ իր ամենէն մեծ տկարութիւնն է: Բաղասամի պերճախօս օրինակը ցոյց կու տայ, թէ էշն անգամ ատակ դարձաւ տեսնելու մարդուն մեղքը, իսկական յամառութիւնը անոր, որ չանսաց Աստուծոյ ձայնին եւ չուզեց ճանչնալ Անոր ճշմարտութիւնը:

Վերոյիշեալ միջադէպին հետ կապուած հրեշտակին ներկայութիւնը, որ աղէտալի ու մահաբեր բնոյթ ունէր, Երկից Մանկանց¹³ եւ Դանիէլի պատմութեան¹⁴ մէջ կենսաբեր պաշտօն մը կ'առնէ: Ուրեմն հոն, ուր մարդը ճշմարիտ Աստուծոյ մասին հաւատքին վկայութիւնը կու տայ, թէկուզ հուրի ու սուրի, օդի մէջ թէ ցամաքի վրայ, կեցած նոյնիսկ մահուան ուժերուն դէմ յանդիման, անպայման Աստուծոյ փրկարար ու կենսատու միջամտութիւնն է որ կը գտնէ:

Սոյն առումով, քաջ յանձնարարելի է ծանօթանալ Տոբիթի¹⁵ փորձառութեան հետ, որ հակառակ ճակատագրին հասցուցած ծանր հարուածներուն, կեանքի բաւիղներուն վրայ ունեցած իր վտանգաւոր խարխափումներուն, դէպի ճշմարիտն Աստուած տածած իր աննկուն հաւատքին համար է, որ Ռաֆայէլ հրեշտակը ուղեկից կ'ուղարկուի իրեն, մահուան ստուերներուն ընդմէջէն տեսնելու լոյսը եւ վերագտնելու նաեւ իր անձնական երջանկութիւնը:

Հին Կտակարանի պատմութիւնը լեցուն է այս եւ նման տեղիքներու բազմազանութեամբ, բայց միեւնոյնն է, այդ ամէնուն ընդմէջէն կարմիր թելի պէս կը վկայուին Աստուծոյ հետ յարաբերող մարդուն ունեցած փորձառութիւնները՝ հաւատքի մեծ թուիչքներու, միաժամանակ՝ սոսկալի անկումնե-

րու առթիւ: Հոն, ուր ուղղակի Աստուած Ինքզինք չի յայտնեւ, չի խօսիր օրէնքին ու մարգարէներուն, այլապէս նիւթեղէն խորհրդանշաններու միջոցով, միշտ հրետակներն են որ հանդէս կու գան իբրեւ միջնորդներ, պատգամաբերներ կամ Տիրոջ անունով ուղարկուած գերբնական էակներ՝ Արարչին կամքը փոխանցելու համար մարդ արարածին:

Թէպէտ սոյն գրութիւնը դիտաւորութիւնը չունի համապարփակ հրեշտակաբանութիւն մը ներկայացնելու, ոչ ալ կը միտի Աստուածաշունչ մատեանին մէջ տեղ գտած հրեշտակներու բոլոր երեւումները մեկնաբանելու, այսուամենայնիւ մեր բուն միտք բանին բացայայտելէ առաջ, անտեղի պիտի չնկատէինք համառօտ անդրադառնալ նաեւ Նոր Կտակարանի մէջ յիշատակուած քանի մը հիմնական դէպքերու:

Աւետարեւր Գաբրիէլ հրեշտակին յայտնութեամբ է, որ կը սկսի Նոր Կտակարանի երրորդ գիրքը՝ Ղուկասու Աւետարանը: Զաքարիա¹⁶ ծերունագարը քահանան, որ ըստ կարգի Տիրոջ խորանը կը խնկարկէր, տեսաւ Նախակարապետին ծնունդը աւետող հրեշտակը, բայց տարակուսեցաւ, մնալով մարդուն համար բնորոշ միայն տեսանելիին եւ շօշափելիին հաւատալու սահմանափակումին մէջ: Ուստի պատժուեցաւ համբանալով, մինչեւ իր որդիին անուանակոչութեան օրը, երբ ան իրեն յայտնուած հրեշտակին թելադրութեան անսաց, ու տախտակ մը խնդրելով անոր անունը արձանագրեց վրան, թէ «Յովհաննէս» պիտի կոչուի:

Ո՞ր հաւատաւոր քրիստոնեային սիրտը չի խայտար բերկրանքին խորհրդաւոր գօրութեամբ, երբ կրկին ու կրկին հաղորդակից կը դառնայ աւետարեւր այն ողջոյնի բովանդակութեան, որ հրեշտակապետը՝ Գաբրիէլ տուաւ Մարիամ մանկամարդ կոյսին. անոր, որ մեր հաւատքի ընկալման մէջ ու պաշտամունքի խորանին վրայ Աստուածածին կը կոչուի: Մայրը ոչ միայն մարդեղացած Աստուածորդիին, այլ Անոր ընդմէջէն ու Անոր շնորհիւ գերագանցապէս ու միաժամանակ ան մայրն է մարդկային ցեղի փրկութեան:

«Ուրախ լեր, բերկրեալդ, Տէր ընդ քեզ¹⁷»: Ահաւասիկ հրեշտակին ողջոյնը, որով սուրբ կոյսը Բանն Աստուած իր կուսական արգանդին մէջ ընդունեց. անոր, որ անսկիզբ ու անժամանակ էր, անըմբռնելի ու անհասանելի էր, որուն երկինքն ու երկիրը չէին կրնար իրենց մէջ պարփակել, Իր անչափ մեծութեան խոնարհեցաւ, Արարիչն ամենայնի իրմէ գոյաւորուած արարածին՝ մարդուն բնութիւնը գգեցաւ: Երբ Ան իր աչքերը կենդանիներուն իբրեւ գոմ ծառայող Բեթղեհէմի քարայրի կիսամութին մէջ լոյսին բացաւ, Տիրոջ հրեշտակն էր, որ Անոր սուրբ ծննդեան աւետիսը յայտնեց հովիւներուն, ու երկնային գօրքերու բազմութիւն մը աստուածային սիրոյն աշխարհի վրայ գեղումին ցնծութիւնը կ'արտայայտէին երգելով. «Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն¹⁸»:

Հրեշտակը, որ տարհամոզած էր Յովսէփը չարձակելու իր նշանուհին քանի որ ան Ս. Հոգիէն յղացած էր, եւ ինչքան ալ եղելութիւնը սուրբ մինչեւ վերջ անըմբռնելի մնաց այդ արդար մարդուն, միեւնոյնն է, ան ենթարկուեցաւ Տի-

րոջ կամքին՝ անսալով ոչ այնքան իր տրամաբանութեան թելադրումներուն, որքան իր հաւատքի հզօր ձայնին¹⁹: Այդ նոյն հրեշտակը, ահաւասիկ, նորէն երեւցաւ Յովսէփի, ու յանձնարարեց անոր Հերովդէսի մահահոտ չարութենէն հեռու փախցնել նորածին մանուկը²⁰: Երբ արքան ոճրագործ մահացաւ եւ Յիսուսի ուղղակի սպառնացող վտանգը վերացաւ, Յովսէփ եւ Մարիամ իրենց մանկան հետ, գօտեպնդուած միեւնոյն հրեշտակին քաջալերական խօսքերէն, Եգիպտոսէն հայրենիք վերադարձան՝ օտարութեան մէջ երկար չդեգերելու եւ Աստուծոյ նախախնամութեան տնօրինումը իրագործելու համար²¹:

Անապատին մէջ փորձութեան ժամանակ, երբ Յիսուս մեր նախահայր Ադամին տկարութիւնը երիցս յաղթահարեց փորձիչին դէմ, ու զայն հեռացուց «Երթ յետս իմ» հրամայելով, հրեշտակներն էին, որ անմիջապէս մօտենալով իրեն ծառայեցին²²:

Ինչքա՛ն դիւթիչ եւ վեհաշուք հզօրութիւն մը ունի հրեշտակներուն երեւումը Յիսուսի թափուր գերեզմանին վրայ: Երկիւղ՝ բայց միաժամանակ անասելի ցնծութիւն մը կը խայտայ հոն տարածութեան մէջ՝ մահուան դէմ յաղթանակող կեանքին աւետիսով պարուրուած: Համատես Աւետարանիչներ՝ Մատթէոս եւ Մարկոս թափուր գերեզմանին վրայ յայտնուող մէկ²³, իսկ Ղուկաս եւ Յովհաննէս զոյգ²⁴ մը հրեշտակներու մասին կը վկայեն: «Անոր տեսքը փայլակի պէս էր, եւ անոր հագուստը՝ ձիւնի պէս ճերմակ²⁵» կ'ըսէ Մատթէոս Աւետարանիչ: Մարկոս նոյնպէս սպիտակաթոյր տեսք մը կը վերագրէ հրեշտակին²⁶: Ղուկաս Աւետարանիչ լուսափայլ²⁷ կերպար մը կու տայ անոնց, եւ Յովհաննէս նմանապէս գերեզմանի ներսը Մարիամ Մագթաղենացիի երեւցող հրեշտակները սպիտակ²⁸ հանդերձներով կը նկարագրէ: Լոյսը կեանք եւ ճշմարտութիւն է. հրեշտակին ներկայութիւնը, որ մասնիկ մըն է Աստուծոյ՝ բովանդակ կեանքը կը խորհրդանշէ:

Ո՛հ, սոսկալի է այն պահը, երբ Տէրը իւրայիններէ լքուելու եւ Յուդայէ մատնուելով ձերբակալուելու սեմին, Գեթսեմանիի մութ գիշերուան մահասարսուռ տենդին մէջ՝ «Հայր, եթէ կամիս, անցո՞ղբաժակս այս յինէն²⁹» կ'աղերսէր, ու իր քրիստն արեան մեծ կաթիլներու պէս գետին կը հոսէր, հոն պահապան հրեշտակ մը միայնակ զինք կը զօրացնէր՝ տնօրինական խորին խորհուրդը իրագործելու որոշումին մէջ³⁰:

Աւետարանի հիմնական պատգամներէն մին է նաեւ Յիսուսի ազդարարութիւնը այն մասին՝ չգայթակղեցնել ու չարհամարհել իր հետեւորդները, բոլոր անոնք, որոնք փոքրիկի մը անսեթեւեթ պարզութեամբ կ'ընդունին փրկութեան աւետիսը, որովհետեւ «Երկնքի մէջ անոնց հրեշտակները միշտ Հայր Աստուծոյ երեսը կը տեսնեն³¹»:

* * *

Հրեշտակներ՝, հրեշտակներ, զուարթուն, պահապան հրեշտակներ, երկնաճեմ թեւաւոր էակներ, ո՞րք ես անոնք մեր այսօրուան կեանքին մէջ:

Անոնք ներկայ են մեր կեանքի բոլոր հանգրուաններուն, մեր ստուերա-

խառն օրերուն մէջ անոնց անուշձիծաղ ժպիտն է, որ կը ցոլայ մեր շատ դիւրաբեկ գոյութեան վրայ:

Քանի՛, քանի անգամ վտանգի պահուն թէ տիրութեան մէջ, զգացած եմ իր ներկայութիւնը երբեմն ինծի այնքան մօտիկ, որ կարծէք նստած ըլլար մերթ աջ եւ մերթ ձախ ուսիս վրայ: Յանկարծ սթափած եմ ծանր թմրութեանէ մը, թմբիր մը, որ կընար անձիս համար ճակատագրական հետեւանքներ ունենալ: Անդրադարձած եմ, որ աներեւոյթ մէկը զգաստացուցած է զիս, ցնցած կամ ետ պահած է ստոյգ չարիքէն: Տեսնելու անձկագին ցանկութեամբ շուրջս նայած եմ, ու ինքզինքիս հարցուցած՝ ո՞վ փրկեց զիս, ո՞վ մխիթարեց նեղութեանս մէջ՞ ցոյց տալով լայն բացուած լուսանցքը յոյսին:

Կրօնական խորունկ զգացողութիւն մը միշտ եկած է զիս համոզելու, թէ ան մեր պահապան հրեշտակն է, եւ գուցէ Աստուած մեզմէ ամէն մէկուն քով նման հրեշտակ մը կանգնեցուցած է, իր թեւերը սուրբ իբրեւ պահպանութեան հովանի տարածելու համար մեր գլխուն վրայ:

* * *

Սակայն պայմա՞ն է, որ հրեշտակ մը թեւեր ունենայ՝ մեզի հաղորդակից դարձնելու Աստուծոյ կենսաբաշխ եւ փրկարար սիրոյն: Տե՛ս այն մարդիկը, որոնք երկրագունդի տարբեր ցամաքամասերուն վրայ, աղէտեալ գօտիներուն մէջ, երաշտէ ու սովէ, բնական աղէտներէ ու պատերազմներու սփռած արհաւիրքներէն զարկուած եւ զրկուած բիւրաւոր թշուառներու օգնութեան կը փութան: Նայէ՛ այդ երիտասարդ ուսանողին, որ ձեռք կու տայ ապաստանարաններու եւ ճամբարներու ժխտին մէջ ընկճուած վատոյթ տղուն: Նայէ՛ տոհմիկ իր առաւելութիւններն ու բոլոր բարիքները մէկդի թողած աղջկան, որ հասեր է համաճարակէ ու մահացու ախտերէ վարակուած հիւանդին, զայն դարմանել փորձելու կամ մեռնողին արժանավայել մահ մը ապահովելու փափաքով: Նայէ՛ այն գոհաբերուող ուսուցչին, որ կեանքի տարրական պայմաններէ գոհանալով, եկեր է իր գիտելիքը բաշխելու փողոցի տղոց եւ աղջիկներուն, զանոնք հաւաքելով բացօթեայ դասարաններու, վրաններու տապին կամ քանի մը փայտերէ ու թիթեղէ յարմարցուած փոքր ու անշուք հիւղակին մէջ:

Պարզ մարդիկ են անոնք մեզի պէս. ո՛չ սրբութաց, ո՛չ երկնաճեմ, ո՛չ լուսափառ, ո՛չ լայնալիճ ճերմակ խոշոր թեւերով եւ ոչ ալ հրեղէն սուր կը բռնեն իրենց ձեռքին մէջ: Բայց անոնք ամէն տեղ են, երբեմն դանդաղ ու տատամսոտ, նոյնիսկ՝ կարճ ու տգեղ: Ահա մէկն անոնցմէ իր ձեռքը տուաւ ու զիս բարձրացուց, երբ ինկած էի: Ան քովս կը գտնուէր, գուցէ սենեակիս պատին միւս կողմը, ու ականջ դրած զիս կը լսէր, երբ առանձնութեանս ճնշող հեւքին տակ օգնութիւն կ'աղբերսէի: Ան էր որ իր հացը կիսեց անօթիին հետ, իր հիւրընկալ յարկին դուռը բացաւ պանդուխտին դիմաց եւ տաք անկողին մը առաջարկեց, երբ ցուրտէն պաղած խուժուժ հազ մը կուրծքս կը պատուէր:

Արդարեւ, չկա՞յ արդեօք մեզմէ ամէն մէկուն մէջ թաքուն հրեշտակ մը, որ բարիին ու լաւին նախազգացումը կ'առթէ մեր ներսիդին: Զայն պէտք է

կանչել մեր հովիթեան խորքէն, մեր նմանին՝ մարդուն հանդէպ ըլլալու համար կարեկցանքի, սիրոյ եւ խաղաղութեան աւետարներ մը:

Բարին խորհելու, խօսելու եւ գայն գործելու համար պայման չէ որ թեւեր ունենանք:

ԱԲԵԼ ՔՀՆՅ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
ժընեւ, 21 մարտ 2009

ԾՆԹ.

- 1) Տե՛ս, Մտ. ԻԸ. 6:
- 2) Տե՛ս, Ծն. ԺԶ. 1-16:
- 3) Լիբանանի Աստուածաշունչի ԸՆկերութեան կողմէ 2001 թուականին Պէյրութ տպուած Աստուածաշունչի արեւմտահայերէն թարգմանութեան մէջ վերոյիշեալը՝ «Դուն իմ տեսիլքիս մէջ երեւցած Աստուածն ես» վերարտադրուած է: Սոյնին հետ համաձայն պիտի չ'ըլլայի, այլ գրաբարի «հայեցար»-ը «հոգալ» եւ «փրկել» իմաստներով պիտի թարգմանէի, ըստ որում՝ «Դուն այն Աստուածն ես որ ինծի հոգացիր» կամ «Դուն ինծի հոգացող», այլապէս՝ «փրկող Աստուածն ես»:
Հմտ, Ծն. ԺԶ. 13:
- 4) Տե՛ս, Ծն. ԺԸ. 1-10:
- 5) Տե՛ս, Ծն. ԺԹ. 1-25:
- 6) Տե՛ս, Ծն. ԺԹ. 26:
- 7) Տե՛ս, Ծն. ԻԱ. 9-21:
- 8) Տե՛ս, Ծն. ԻԲ. 1-13:
- 9) Տե՛ս, Ծն. ԻԸ. 15:
- 10) Տե՛ս, Ծն. ԼԲ. 24-30:
- 11) Հմտ, ԹԼ. ԻԲ. 28-30:
- 12) Հմտ, ԹԼ. ԻԲ. 21-35:
- 13) Տե՛ս, Դն. Գ. 19-30:
- 14) Տե՛ս, նոյնը Զ. 1-28:
- 15) Տե՛ս, Տոլբիթ Ա.-ԺԴ.:
- 16) Տե՛ս, Ղկ. Ա. 5-25, 57-63.:
- 17) Հմտ, Ղկ. Ա. 28:
- 18) Հմտ, Ղկ. Բ. 14:
- 19) Հմտ, Մտ. Ա. 18-22:
- 20) Հմտ, Մտ. Բ. 13-15:
- 21) Հմտ, Մտ. Բ. 19-23:
- 22) Հմտ, Մտ. Դ. 1-11:
- 23) Հմտ, Մտ. ԻԸ. 2: Մկ. ԺԶ. 5:
- 24) Հմտ, Ղկ. ԻԴ. 4: Յով. Ի. 12:
- 25) Հմտ, Մտ. ԻԸ. 3:
- 26) Հմտ, Մկ. ԺԶ. 5:
- 27) Հմտ, Ղկ. ԻԴ. 4:
- 28) Հմտ, Յով. Ի. 12:
- 29) Տե՛ս, Ղկ. ԻԲ. 42:
- 30) Հմտ, Ղկ. ԻԲ. 41-44:
- 31) Տե՛ս, Մտ. ԺԸ. 10:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՍԻՆ

Հռովմի Լազարիստներու մատենադարանին մէջէն հետեւեալ յիշատակագիրը գտնուած է, որ նամակ մըն է Յիսուսի մասին: Անոր հեղինակն է Հրէաստանի Կուսակալ Պոնտացի Պիղատոսի նախորդը՝ Փիւպլիոս Լանթիլիւս: Լատիներէն լեզուով գրուած է՝ այն թուականին, երբ Քրիստոս առաջին անգամ երեւցաւ ժողովուրդին եւ սկսաւ քարոզել: Բնագրի թարգմանութիւնը հետեւեալն է.

«Յուդայի կառավարիչէն հռովմայեցի Կայսեր.

Իմացայ, ո՛վ Կայսր, թէ կը փափաքիս տեղեկութիւններ ստանալ այն խիստ առաքիինի մարդուն նկատմամբ՝ որ Յիսուս Քրիստոս կը կոչուի: Ժողովուրդին կողմէ կը նկատուի իբր մարգարէ, եւ իր աշակերտները կ'ըսեն թէ անիկա երկնքի, երկրի եւ ամէն բաներուն ստեղծիչ Աստուծոյ Որդին է:

Ստուգիւ, ո՛վ Կայսր, ամէն օր այս մարդուն վրայ հրաշալի բաներ կը պատմուին. մեռելները կը կենդանացնէ եւ հիւանդներ կը բժշկէ: Միջահասակ է, բարի երեւոյթով. մանաւանդ դէմքը վեհ արտայայտութիւն մը ունի, այնպէս որ մարդ զայն դիտած միջոցին՝ չի կրնար գինք չսիրել եւ իրմէ չակնածիլ: Անոր մագերը հասուն ընկոյզի գոյն ունին մինչեւ ականջները, եւ անոնցմէ վար՝ դէպի ուսերը փայլուն ու խարտեաշ են, եւ գլխուն գագաթէն սկսեալ երկուքի բաժանուած՝ Նազովրեցիներուն սովորութեան համեմատ: Ճակատը ողորկ եւ անդորր է, դէմքը՝ անխորշոմ ու անբիծ, շրթունքը՝ խիստ սիրուն:

Օրորուքը մագերուն երանգովն է, անոնցմէ աւելի խիտ, եւ առանց երկայն ըլլալու՝ մէջտեղէն երկուքի բաժնուած է: Նայուածքը լուրջ է եւ ակնածանք կը ներշնչէ: Արդարեւ ճառագայթի զօրութիւն ունի այս անձը: Ոչ ոք կրնայ զայն դիտել ուղղակի: Երբ յանդիմանութեան միջոցին արտասուէ, բոլորովին լուրջ ըլլալով հանդերձ՝ շատ սիրուն եւ շնորհալի է: Կ'ըսուի թէ երբեք նշմարուած չէ անոր խնդալը, բայց մէկէ աւելի անգամներ լացած է: Ամէն ոք իր խօսակցութիւնը հաճելի կը գտնէ: Շատ քիչ անգամ ժողովուրդին մէջ կը գտնուի, բայց երբ տեղ մը տեսնուի՝ համեստութեամբ երեւան կուգայ: Իր ծանրաշքութիւնը ուրիշ ոչ մէկ մարդու վրայ նկատուած է: Գեղանի է, եւ իր մայրն ալ այս գաւառին մէջ ամենագեղեցիկ կ'ինն է:

Եթէ կը փափաքիս զայն տեսնել, ո՛վ Կայսր, ինչպէս ասկէ առաջ ալ գրած էին ինծի, տեղեկացո՛ւր զիս, ու ես զայն շուտով քեզի կը զրկեմ: Թէեւ բնաւ ուսում չէ առած, սակայն բոլոր գիտութիւններուն տեղեակ է: Բոկոտն կը քալէ եւ գլխաբաց: Շատեր կը խնդան զայն հեռուէն տեսնալով. բայց երբ մօտենայ, կը սարսուռան ու կը հիանան անոր վրայ: Կ'ըսուի թէ այս սահմաններուն մէջ ցարդ այսպիսի մէկը յայտնուած չէ բնաւ: Ստուգիւ, ինչպէս որ կը հաւաստեն, երբեք իրեն նման վարդապետ մը չէ ունկնդրուած:

Բազմաթիւ հրեաներ կը դաւանին թէ անիկա Աստուած է: Ուրիշներ գինք թշնամի կը նկատեն: Սա չար եբրայեցիները զիս կը ձանձրացնեն ամէն

կերպով: Կ'ըսուի՝ թէ ան ոչ մէկը դժգոհ ձգած է, այլ՝ ընդհակառակը՝ ամէն ոք իրմէ լիացած կը բաժնուի:

Ամէն պարագայի մէջ, ո՛վ Կայսր, պատրաստ եմ գործադրել այս մասին քու ինծի տալիք հրամաններդ»:

Երուսաղէմ, 7 Ինտիքթի եւ 11 Մահիկի,

Կառավարիչ Յուդայի

Փիւպլիւս ԼԱՆԹԻԻԼԻԻՍ



Սուրբ Միգաս

Ս. Քասաանից Մանկանց Մայր Եկեղեցի — Հալէպ

ԵՐԿՆԱՔԱՂԱՔԱՑԻՔ

1937 թ. սեպտեմբերի 2ի լոյս 3ի գիշերը Երեւանի Ներքին Գործերի կոմիսարիատի բանտախցից դուրս բերուեցին տառապանքից եւ անողոք հարցաքննութիւններից հիւծուած մի քանի կալանաւորներ: Նրանց աչքերը թաշկիւնակներով կապուած էին, իսկ ձեռքերը՝ շղթաներով: Այդ թաշկիւնակներից քրտինքի, արեան եւ մահուան հոտ էր գալիս:

Կալանաւորները համակերպուել էին իրենց ճակատագրին: Նրանց տանում էին գնդակահարելու, որովհետեւ պարկեշտօրէն ծառայել էին հայ ժողովրդին եւ քաջաբար ընդդիմացել ազգային արժէքներն ու սրբութիւնները ոտնակոխ անող ամբարիշտ իշխանաւորների քարոզչութեանն ու անարգ գործունէութեանը:

Այդ կալանաւորներից մէկը Շիրակի եւ Սիւնեաց թեմերի նախկին առաջնորդ Արտակ եպիսկոպոս Սմբատեանցն էր: Թուրքերն անգամ նրան այդպէս չէին անարգել, երբ 1918 թ. իբրեւ հայ ազգաբնակչութեան ներկայացուցիչ գնացել էր Կարսն ու Ալեքսանդրապոլը գրաւած թուրք զօրականների հետ բանակցելու: Նրանք սկզբում կապել էին Սրբազանի աչքերը, պարզապէս որպէսզի նա չտեսնի իրենց ռազմամթերքն ու զինուորների գրաւած դիրքերը: Բանակցութեան ընթացքում բանակատեղից դուրս գալուց յետոյ հանել էին նրա աչքակապը: Մինչդեռ անհաւատ գաղափարախօսութեամբ սնուած ու պղծուած մարդկային այդ գծուէ կակաները, խորհրդային պետութեան հայանունու ու հայադաւ գործակալները, չթողեցին Սրբազանին ու նրա բախտակիցներին մի անգամ էլ ողջունել աստուածատուր արեւածագը:

Մարդակերպ հրէշներն, ընդհանրապէս, սնուում են անմեղների վաստակով ու արեամբ: Հրէշները ամէն տեղ են սողոսկում՝ ե՛ւ աջերի, ե՛ւ ձախերի մէջ, ե՛ւ նոյնիսկ կրօնական խմբաւորումներում են յայտնուում:

Այս մտքերով էի տարուել, երբ ընկերս, զայրացած մի բարոյագուրկ հոգեւորականի վատահամբաւ արարքներից, ասաց.

— Հիմա ես լաւ եմ հասկանում, թէ ինչո՞ւ կոմունիստները եկեղեցականներից շատերին բանտարկեցին, աքսորեցին կամ սպանեցին:

Իսկ ներկայ հաւատացեալ տիկիւններից մէկն էլ յարեց.

— Իմ հանդիպած բարձրաստիճան կրօնականներից շատերը գոռոզամիտ են, որովհետեւ դատարկամիտ են, վերջերս սկսել են նոյնիսկ թիկնապահներով շրջել իրենց հօտի մէջ: Բարի մարդիկ թիկնապահի կարիք չեն ունենայ...

— Խնդրում եմ, — ասացի, ընդհատելով խօսակցութիւնը, — թացը չորի հետ չվառել: Բռնադատուած եկեղեցականները կարող էին խուսափել հալածանքներից, եթէ միայն հրաժարուէին իրենց հոգեւոր կոչումից կամ համագործակցէին իշխանութիւնների հետ՝ մատնելով իրենց հաւատակիցներին, չդաւաճանելով իրենց կրօնական սկզբունքները, ինչպէս ոմանք արեցին: Դուք միայն վատերի օրինակն էք բերում: Ո՞ւմ յայտին չէ, որ շատերը եկեղե-

ցական են դարձել փափկակեցուլթեան համար, կուսակրօնութիւնը վերածել են անբարոյականութեան՝ որձեւէզ յարաբերութիւններում մեծ վաստակ ձեռք բերելով, կամ էլ պարզապէս հետամուտ լինելով բարձր պաշտօններ զբաղեցնելու եւ հարստութիւն կուտակելու: Բայց, բարեբախտաբար, հազար փա՛ռք Աստծուն, որ եղել են եւ կան անբասիր ու աղօթող, սաղմոսասաց եւ իր հօտի համար անձնդիր եկեղեցականներ, հրաշագործ հոգիներ, ամէնուրէջ բարութիւն սերմանող, քաղցրութիւն սփռող, Քրիստոսի անոյշ բուրմունքն ունեցող հոգեւոր այրեր:

Դրանցից մէկն էր հոգու անարատութեամբ փայլող Արտակ եպիսկոպոսը, որ եղել էր Յիսուսի Աւետարանի համարձակ քարոզիչ, դատապարտելով ոչ միայն աշխարհականների, այլեւ մի շարք մոլորուած կրօնականների չարաշահումները: Դրա համար էլ շատ պարզ էր, որ պիտի հալածուէր եւ վերջում նոյնիսկ մահուան դատապարտուէր:

Սրբազանի՝ ձեռքս անցած անտիպ գրութիւններից մէկում կարդում ենք.

«Կեանքն այնտեղ է, որտեղ մարդ Աստուծոյ հետ միացած է, լինի այդ այս աշխարհում թէ այն աշխարհում: Աստուծոց լքուած լինել, մահ է նշանակում, դա մարդու ներքին հոգեկան աշխարհի քայքայումն է: Ով յաւիտենական կեանք չունի իւր մէջ, նա կենդանի չէ: Ով որ միայն անցողական իրերի հետ է կապուած, որոնք ինչպէս երեւոյթ են ու ամպերի պէս չքացող, ով որ անցողական նպատակներ ունի, նա ինքն էլ անցողական է: Եթէ մարդուն Աստծուց բխած Ս. Հոգին չի առաջնորդում՝ նա նման կը լինի այն նաւին, որ ծովի ալիքների մէջ անյոյս տարուբերում է եւ մի յուսոյ ափ չի տեսնում, որտեղ դուրս ելլել եւ փոթորիկից ազատուել կարող է: Մարդ առանց Աստուծոյ անհաստատ է, անկայուն է»:

1924թ. փետրուարին Արտակ եպիսկոպոսը, վտանգելով նոյնիսկ իր սեփական անձի ապահովութիւնը, իր արդար բողոքի ձայնն է բարձրացնում հոգեւորականների նկատմամբ ձեռնարկուած ահաբեկումների դէմ: Այդ առթիւ նա գրում է Հայաստանի նախարարների խորհրդի նախագահ՝ Լուկաշինին.

«Յաւօք սրտի պարտք եմ համարում յայտնել Ձեզ, որ կոմսոմոլներն ու գիւղգործկոմներն շարունակեցին առաւել եւս ծաղր ու ծանակի ենթարկել քահանաներին, թքոտել նոցա վերայ, հրապարակով ամենաստոր խօսքերով վիրաւորել հայ հաւատացեալի սրբութիւնները՝ խաչն ու աւետարանը, արգելել քահանային ժամ գնալ, զանգ խփել, ժամերգութիւն կատարել, այլեւ աւելի հեռուն գնալով, հայ ժողովրդի Աստծոյ տաճարների վրայից խաչերը վերցրին. սրբութիւնները թալանեցին, եկեղեցական գրքերը ոչնչացրին, սեղանները քանդեցին եւ եկեղեցին թատրոնի դարձրին, որի համար կեղծ ստորագրութիւններ կազմեցին ժողովրդի անունից: Իսկ այն հաւատացեալ ժողովրդին, որ յանդգնել է իւր հաւատի, կրօնի, իւր եկեղեցու պաշտպան կանգնել, ահուղորդի մէջ ձգելով՝ գնդակի սպառնալիքի տակ են պահում...»:

Սրբազանը գիտէր աշխարհիկն ու վաղանցուկը, սուտն ու կեղծիքը տարբերել յաւիտենական ճշմարտութիւնից եւ երկնքի խոստացուած անկա-

պուտ բերկրանքից: Նա ինքնակամ զոհում էր իր անձի երկրային վաղանցուկ ապահովությունը՝ պայքարելով չարի ու անարժէք երեւոյթների դէմ, որպէսզի ամէն ինչում բարին ու մնայուն արժէքները յաղթանակեն, որպէսզի ինքն ու իր նմանները չզրկուեն իրենց երկնային քաղաքացիութիւնից, քանզի քրիստոնեաները կոչուած են դառնալու երկնքի քաղաքացիներ (Փիլիպ Գ 20)՝ ի տարբերութիւն նրանց, «որոնց Աստուածը իրենց որովայնն է» (Փիլիպ Գ):

Ինչպէս նախկինում, այսօր էլ գոյութիւն ունեն այնպիսի վաճ կեղեցականներ, որոնք հանդուրժում են չարիքը, քծնում են խաւարամիտ ու անհաւատ վարչականների կամ կուսակցական թունալից դրածոների առջեւ՝ պարզապէս իրենց դիրքն ու աթոռը պահելու ստոր նկատառումներով: Այդպիսիների համար Արտակ եպիսկոպոսի նման սրտցաւ, բարեխիղճ եւ միաժամանակ քաջարի կղերականները զուրկ են համարուում դիւանագիտութիւնից եւ յարմարուելու ճկունութիւնից:

Բայց դա այդպէս չէ: Արտակ Սրբազանն ու իր նմանները ոչ թէ դիւանագիտութիւն չունեն, այլ նրանք իրենց իմաստութիւնն ու դիւանագիտական կարողութիւնը ծառայեցնում են միայն ու միայն ի փառս Աստուծոյ, յանուն արդարութեան ու ճշմարտութեան տարածման:

«Դիւանագէտ» եկեղեցականները հաշիւներով են շարժուում, ունեն իրենց ուրոյն հաշուարկները, բայց այդ հաշիւները շատ անգամ սխալ են դուրս գալիս: Աստուած ուշադրութիւն չի դարձնում մարդկային յարաբերութիւններում հաշուարկներով առաջնորդուող անձանց, այլ նա փնտռում է եւ գնահատում գորովալից ու գործուն սիրով տոգորուած մարդկանց սրտերը:

Տիրահոգակ Չեկայի արձանագրութիւնների մահաբոյր մատեանում գոյութիւն ունի միայն մի հակիրճ տեղեկանք Արտակ Սրբազանի մահուան հանգամանքների մասին:

«ՀՍՍՀ ՆԳԺԿԻ Եռեակի որոշումը 1937թ. օգոստոս 31ի Արտակ Եփրեմի Սմբատեանի գնդակահարման մասին ի կատար ածուեց 1937թ. սեպտեմբերի 2ի լոյս 3ի գիշերուայ ժամը երկուսին»:

Նրա նման անշիրիմ նահատակներ բազմաթիւ են: Նրանց անարատ արեամբ օրհնուեց հայրենեաց սրբազան հողը, նրանցով փրկուեց եկեղեցականութեան եւ եկեղեցու պատիւն ու վարկը:

Նրանք յաճախ նկատի չեն առնուում, աչքի չեն ընկնում. արհամարհուած են, բայց Աստուծոյ կողմից յաւէտ փառաւորուած: Երկրածին լինելով հանդերձ՝ ապրել են ու շարունակում են ապրել իբրեւ երկնաքաղաքացիներ:

Նրանք են, որ վառ են պահում մեր հաւատքի լուսապայծառ կանթեղը:

ՅԱԿՈՒ ԱՐՔ. ԳԼՆՃԵԱՆ

ՎԱՆՔԵՐՈՒ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ

Անգնահատելի եղած է հայ վանքերու օգտակարութիւնը քրիստոնէական սկզբնական շրջանէն մինչեւ մեր թուականները Հայաստանի եւ սփիւռքի տարածքին վրայ: Գրաւոր մեր գանձերուն, գիր ու գրականութեան եւ մշակոյթի անցամաքելի աղբիւրն ու շտեմարանը հանդիսացած են անոնք: Եթէ վանքերը գոյութիւն չունենային, ի՛նչ ճակատագիր վերապահուած կրնար ըլլալ անոնց. կարելի չէ վստահօրէն արտայայտուիլ այս մասին, որովհետեւ կարելի չէ նախատեսութիւններ ընել անցածի մասին ժխտական կամ հաստատական վերաբերումներ ունենալով:

Գիրերու գիւտէն առաջ մեր գրականութիւնը շատ աղքատ էր, որովհետեւ կարելի չէր օտար գիրերով (Ասորի եւ յոյն) հայերէն լեզուի նրբութիւնները ի յայտ բերել, հնչումի եւ արտայայտութեան օրինաւոր ձեւերու անյարմարութիւններու հետեւանքով: Մեսրոպ Մաշտոցի գիրերու գիւտէն (406ին) ետք, Ս. Մեսրոպ Մաշտոց, Ս. Սահակ Հայրապետի քաջալերութեամբ ու Վռամշապուհ թագաւորի օժանդակութեամբ վանքերու մէջ դպրոցներ բացաւ եւ ունեցաւ իր աշակերտները, որոնք բաւարար ուսում առնելէ ետք, գործակցեցան իրենց սիրելի ուսուցչին ու ձեռնարկեցին Սուրբ Գիրքի թարգմանութեան: Թարգմանչական աշխատանքներուն մասնակցող Սահակ-Մեսրոպեան աշակերտներն էին՝ Ղեւոնդ Երէց քահանան, Եղնիկ Կողբացի, Կորիւն եւ ուրիշներ: Այս թարգմանութիւնը ա՛յնքան հարազատ էր, որ օտար գիտնականներ քննելով զայն, կոչեցին «Թագուհի թարգմանութեանց»:

Մեսրոպ Մաշտոց, Փաւստոս Բիւզանդացի, Ագաթանգեղոս, Եղնիկ վարդապետ Կողբացի, Կորիւն եւ Մովսէս Խորենացի, ոչ միայն թարգմանութիւններ ըրին, այլ նաեւ իրենց ստեղծագործութիւններով ճոխացուցին հայ գրականութիւնը, մասնաւորաբար գիտական, երաժշտական, ճարտարագիտական, քանդակագործութեան, նկարչութեան եւ տնտեսութեան մարզերուն մէջ: Հինգերորդ դարուն գիրն ու գրականութիւնը եւ մշակոյթը ա՛յնքան զարգացան, որ դարը իրաւամբ կոչուեցաւ «Ոսկեդար»:

Մեսրոպ Մաշտոցի կրտսեր աշակերտը՝ Մովսէս Խորենացին՝ գրեց իր հռչակաւոր «Հայոց Պատմութիւնը», այդ պատճառով ալ արդարօրէն կոչուեցաւ Պատմահայր:

Վանքերն են, որ երկար դարեր (մինչեւ 19րդ դար) հայ ժողովուրդին իմացական ու հոգեւոր սնունդ ջամբեցին եւ ապահովեցին հայ եկեղեցիի ինքնիշխան ու յարատեւ գոյութիւնը: 20րդ դարուն ալ, եկեղեցիի, դպրոցներու եւ գրականութեան բարգաւաճման ու պայծառութեան մեծապէս նպաստեցին ու կը նպաստեն ալ տակաւին՝ Արմաշի, Երուսաղէմի եւ Անթիլիասի վանքերը, ինչպէս նաեւ Վենետիկի, Վիեննայի վանքերը:

Վանքերն էին, որ իրենց կուսակրօն վարդապետներուն շնորհիւ գիր ու գրականութիւն ծաղկեցուցին ու տարածեցին Հայաստան աշխարհի մէջ,

որովհետեւ այն ատեններ աշխարհականները հնարաւորութիւն չունէին զիր ու գրականութեամբ զբաղելու, ստեղծագործելու, կամ թարգմանական ապե-րախտ ու դժուարին աշխատանքով պարապելու:

Հայաստանի եւ Կիլիկիոյ հարիւրաւոր վանքերն են, որ այս մարզին մէջ միշտ հրաշքներ գործեցին ու փրկարար դեր կատարեցին ազգային ոգին ժո-ղովուրդի մէջ վառ պահելու տեսակէտէն: Ասոնց մէջ սակայն ամենէն նշանա-ւորը եղած է, շատ մը հին եւ շատ կարեւոր վանքերէն բացի, միջնադարեան Հայաստանի նշանաւոր ուսումնասիրական համալսարան՝ Գլաճորը, Վայոց ձորի մէջ, Եղեգնաձորի շրջան, որ ժամանակին կոչուած է «Երկրորդ Աթենք Պանծալի», «Մեծ Դպրատուն», «Գերահռչակ համալսարան», եւայլն: Հիմն-ուած 1280ին ուսուցչապետեր՝ Ներսէս Մշեցիի եւ Եսայի Նէցեցիի կողմէ եւ աւերուած 1350ի ատենները: 70 տարի անընդհատ սերունդներ հասցնելով հայ ազգին, անիկա կորուստէ կամ ոչնչացումէ փրկած է անցեալի հարուստ մշա-կոյթի բազմաթիւ յուշարձաններ եւ փոխանցած ապագայի սերունդներուն: Նոյն համալսարանէն շրջանաւարտ եղած են Ստեփաննոս Օրբելեանը, Յով-հաննէս Որոտնեցին, Գրիգոր Տաթեւացին, Մխիթար Սասնեցին, Յոհան Արճի-չեցին, Տիրատուրը, Կիրակոս Երզնկացին, ինչպէս նաեւ միջին դարու բանաս-տեղծութեան պարծանքը հանդիսացող Ֆրիկը: Այժմ Գլաճոր համալսարանի 713ամեակն է, չարժե՞ր արդեօք տարին անգամ մը յիշել զայն եւ անոր հիմ-նադիրները, որոնք անգնահատելի ծառայութիւն մատուցեցին Հայաստանին եւ հայ ժողովուրդին:

Բարձր ուսում առնելու համար Գլաճոր կուգային Տարօնէն, Երզնկայէն, Շիրակէն, Արաքսէն, Գուգարաց երկրէն, Կիլիկիայէն եւ ուրիշ հեռաւոր գա-ւառներէ եւ մեկուսացած վայրերէ: Վանքի վանական վարդապետներն էին, որ ժամանակի բոլոր օտար նշանաւոր փիլիսոփաներու, աստուածաբաններու, գրագէտներու, բանաստեղծներու եւ գիտնականներու նշանաւոր գործերը, երկերը հայերէնի թարգմանեցին: Թարգմանեցին Կիւրեղ Աղեքսանդրացիի, Եփրեմ Ասորիի, Յոհան Ոսկեբերանի եւ յոյն ու ասորի նշանաւոր հեղինակնե-րու ստեղծագործութիւնները. նաեւ անդուլ ու մեղուաջան աշխատանքով ստեղծագործեցին ինքնատիպ երկեր, գիտութեան տարբեր բնագաւառներ ընդգրկելով՝ փիլիսոփայութեան, քերականութեան, տոմարագիտութեան, ու-սողութեան եւ աստուածաբանութեան:

Եթէ այդ վանքերը հիմնուած չըլլային, հին, պատուտուած ու գունաթափ հայկական բազմաթիւ բնագիրներ մեզի պիտի չհասնէին, եւ հայկական հին ստեղծագործութիւններ կարելի չէր, որ մեր մշակոյթին դանձարանին անգին զարդը կազմէին: Եզնիկ Կողբացիի «Եղծ Աղանդոց»ի մասին գաղափար իսկ պիտի չունենայինք: Էջմիածնի, Վենետիկի, Անթիլիասի, Երուսաղէմի, Նոր Զուղայի եւ Անգլիոյ մատենադարաններուն մէջ տասնեակ հազարաւոր թան-կարժէք այդ ձեռագրերը գոյութիւն պիտի չունենային նոյնպէս, եթէ այդ վանքերը գոյութիւն ունենալէ դադրէին:

Կիլիկիոյ մէջ կարգ մը վանքերու եւ մենաստաններու շարքին Սկեւոս

վանքն ու դպրոցը գոյութիւն չունենային եւ Լամբրոնացիի պէս գիտնական եկեղեցական մը անոր տեսչութիւնը ձեռնհասութեամբ չվարէր, ի՞նչպէս պիտի զարգանար գրչագրութիւնը, մանրանկարչութիւնը, ուսողութիւնը, տոմարագիտութիւնն ու քերականութիւնը եւ մեր հարուստ մշակոյթը իր բոլոր բնագաւառներով:

Հայաստանի մէջ մեծ ու անուանի վանքերէն զատ, եթէ չըլլային Բոլորբերդը, Հերմոնը, Եղեգիսը, Վերին Նորավանքը, Մշոյ Ս. Առաքելոց վանքը եւ ուրիշ անչուք համարուող վանքեր, գրչութիւնը ի՞նչպէս պիտի զարգանար եւ յառաջդիմէր. ի՞նչպէս ընդօրինակուէր Աստուածաշունչը, գիտական, փիլիսոփայական եւ աստուածաբանական հոշակաւոր երկասիրութիւնները. աստղագիտութեան, ուսողութեան եւ ընկերային ու կրօնական դաւանական հարցերու վերաբերեալ ժամանակի գիտնականներու հեղինակութիւնները:

Աշխարհականներու նախաձեռնութեամբ հիմնուած ուսումնարանները նոյնիսկ հետագային վանքերու հովանաւորութիւնը կը վայելէին, որովհետեւ առանց անոնց միջամտութեան, աջակցութեան եւ վերին հսկողութեան կարելի չէր հիմնաւորել եւ տեւականացնել անոնց գոյութիւնը:

Առնենք ներկայ դարը, ուր ամէն տեղ դպրոցներու ցանցը զգալի կը դարձնէ իր գոյութիւնը, դարձեալ կղերին հովանաւորութիւնը կը վայելէ. կուսակցութիւններու հովանաւորութեան տակ գտնուող մասնաւոր դպրոցները միայն գերծ են կղերականներու տիրապետութենէն, անոնք ալ շատ քիչ են, բաղդատամբ ազգային վարժարաններու ցանցին:

Մեծ ու երախտաշատ արդիւնքներ ապահովեցին Արմաշի վանքը, էջմիածնի Գէորգեան ձեմարանը, Անթիլիասի Դպրեվանքն ու Երուսաղմի Սուրբ Յակոբայ վանքը. իսկ Եւրոպայի մէջ՝ Վենետիկը, Լիբանանի՝ Զմմառու վանքը, եւ այլն:

Չենք կրնար ուրանալ վանքերու կատարած մեծ գործերուն օգտակարութիւնը, ասոնք են, որ, կրնանք անվարան յայտարարել, մեր գոյութեան յարատեւման մեծապէս սատարեցին ու զարգացուցին հայ մշակոյթը. առանց վանքերու, շատ աղքատ եւ խղճալի մշակոյթ մը պիտի ունենայինք, ասիկա անուրանալի իրողութիւն է, առանց վարանելու կրնանք յայտարարել:

Հայութիւնը երախտապարտ է իր հին ու նոր վանքերուն, անոնց վատակաշատ մշակներուն եւ զանոնք անսակարկ հովանաւորողներուն եւ քաջալիր հանդիսացողներուն:

ՍԱՐԳԻՍ ՊԱԼԵԱՆ
Մոնթրէալ, 12 սեպտ., 1993

ՇԱՀԱՆ Ռ. ՊԷՐՊԷՐԵԱՆԻ ՇԱՀԵԿԱՆ ԳՐՔՈՅԿԸ

«Հոգեւորականը հոգիի մարդն է»:
Շահան Պերպէրեան

Հայոց մեծ իմաստասէր, հոգեբան, երաժշտագէտ, խմբավար, գեղագէտ եւ բարոյագէտ՝ Շահան Ռ. Պերպէրեան, իր «Թելադրանք Հոգեւորականներու» գրքոյկին մէջ, գրուած 1938–1944, կ'անդրադառնայ խիստ շահեկան ու կենսական նիւթի մը՝ «Հայ Արդիական Կրօնաւորը»: Ան մանրամասնօրէն կը նկարագրէր հայ արդի կրօնաւոր ըլլալու հասկացողութիւնը եւ զայն կը բաժնէ հետեւեալ ստորակարգերու՝

- ա. Ի՞նչ է կրօնաւորութիւնը
- բ. Ի՞նչ է արդիականութիւնը
- գ. Ի՞նչ է հայութիւնը

Կրօնաւորութեան ակնարկելով, կը նշէ որ նախ եւ առաջ «հոգեւորականը հոգիի մարդն է, ... ոգիի մարդը, de l'esprit»: Ան կը տարբերի ամէնքէն իր ներքին խորունկ աշխարհով, հոգեկան նուրբ հիւսուածքով ու իմացական բարձրագոյն կարողութեամբ: Կրօնաւորը, սակայն, հիմնականին մէջ պէտք է տարբերի իր ոգեկան տարրով: Բայց ի՞նչ է ոգին: Ինչպէ՞ս կարելի է սահմանել անոր իմաստը. «Ոգին այն է, որ իրականութիւնը նախ իմացապէս կը նուաճէ, որ կը գիտնայ, մեր մէջ գիտցող կարողութիւնն է», կը գրէ Պր. Պէրպէրեան: Ոգին, ուրեմն, լոյսի դեր ստանձնած, կուգայ լուսաւորելու՝ անծանօթը ծանօթի վերածելով, թաքնուածը յայտնաբերելով եւ մթազնածը պայծառացնելով: Ոգին կ'որոնէ նաեւ միջոցներ՝ գործելու, նպատակակէտի մը հասնելու եւ աշխատանք մը իրագործելու համար: Ոգին դադար չունի, չի հատնիր, չի սպառիր: Չի ճանչնար յոգնութիւն եւ վհատութիւն: Հետեւաբար, ոգին «լուսաւոր ոյժ մըն է, ... կամեցող է, ... նաեւ սիրող ոյժ մըն է, ...»:

Կրօնաւորը, ոգիի մարդ ըլլալով անոր հետաքրքրութեան ծիրը ընդարձակ է եւ ունի անմար արժէքներու շարք մը: Անոր ընտրած արժէքները կը գերազանցեն ու կ'անդրանցնին պարզ, սովորական, մարդաստեղծ արժէքները: Ան կը ձգտի բարձրագոյնին ու վեհագոյնին, նոյնիսկ՝ անկարելիին: Եկեղեցական, որ բռնուած է ոգեղէն արժէքներու ստեղծումով ու պահպանումով, չի կրնար ինքզինք անջատել ոգեկան ակունքին բարիքներէն ու հոգեկան վայելքներէն: Ան յարատեւ պիտի տառապի ու տքնի՝ հասնելու այդ անաղբիւրին: Ինչ փոյթ որ սակաւադէպօրէն պիտի գնահատուի ան որ ոգորումի ու մարտնչումի ճանապարհին է: Անտարակոյս, այս պատճառ պիտի ըլլայ որ կրօնաւորին եւ ռամիկ մարդուն միջեւ խրամատը ընդլայնի՝ ռամիկը նիւթը հետապնդելով, իսկ եկեղեցականը՝ ոգին:

Հոգեւորականը «մեծ սիրոյ մարդն է», որուն սէրը ի վերուստ կ'ընծայուի իրեն՝ մեծ Վարդապետին նուիրական կեանքով ու կենարար խօսքով: Միրոյ ճառագայթումը՝ անոր հոգիէն ներս այնքան հզօր է ու պայծառ, որ ան չի գբաղիր կեանքի մանրուքներով, փուճ հարցերով, չի խաբուիր սնտոի երեւոյթներով, այլ իր վեհոգութեամբ կը բարձրանայ, կը ճախրէ եթերն ի վեր, կ'ընդգրկէ նոր ոլորտներ:

Հոգեւորականը ակնբախ պէտք է ըլլայ իր ազնուական ոգիով: Անոր հոգին, այո, ազնիւ պէտք է ըլլայ, սիրտը՝ բարի, բնաւորութիւնը՝ հեզ, ներող: Կրօնաւորին ազնուականութիւնը կը համարուի հազուագիւտ առաքինութիւն եւ բացառիկ յատկութիւն: Այս ազնուականութիւնը ժառանգական չէ, այլ՝ ստացական: Այս եկեղեցականը, իր օրինակելի վարք ու բարքով, իր ստեղծագործական ոգիով՝ իր ծիածանի բոլոր նրբերանգներով, եւ իր սիրոյ արտայայտութեամբ ձեռք կը ձգէ գայն: Այս պատճառով, ան կը փնտռուի ամենուրեք եւ իր անձին հանդէպ պաշտամունքային սէր եւ խորին ակնածանք կը պարտադրէ:

Եկեղեցականը ժամանակին մարդն է: Ան ապրելով ներկայ առաջընթաց դարուս մէջ, իր գլուխը չի պահեր միջնադարի խաւարին մէջ, այլ «ան իրապէս ժամանակին գլուխը կեցած է», հետեւաբար, անընդունակ է հիննալու եւ դառնալու ժամանակավրէպ ու անպիտանի: Այս եկեղեցականը այլեւս այոց գութին ու կարեկցանքին կարիք չունի, որովհետեւ իր նոր պատմութեամբ արդէն իսկ գրաւած է սիրտը իր ժողովուրդին եւ հովուական մականն ի ձեռին կը հովուէ իր Բանաւոր Հօտը դալար մարգագետիններու մէջ: Այս այն հոգեւորականն է, որ ինքզինք գիտակցօրէն ու կամաւորապէս գրկելով կեանքի պարզեւած անցողիկ հաճոյքներէն ու վայելքներէն, անձնատուր եղած է «հոգիի հաճոյքներուն»: Անդին, կան նաեւ եկեղեցականներ «որոնք իրենք իրենց վրայ կը խղճան, որ չեն կրնար պարել, եւ չունին այն հաճոյքները, որոնք այնքան շատ են դուրսը...հոգեւորականը անոնց հաճոյքէն գրկելով ինքզինք, ոչ թէ չուզէր զանոնք վայելել, այլ որովհետեւ անոնցմէ վեր՝ ինք ոգիի հաճոյքը ունի»: Ահա այդ բարձրագոյն հաճոյքն է որ զինք կ'արգիլէ իջնել հասարակ մակարդակի եւ վեր կը բարձրացնէ՝ ըմբռնելու «գերագոյն հաճոյքը», որ անփոխարինելի է: Պր. Պէրպէրեան յատակօրէն կը գրէ, որ այն եկեղեցականները որ «չեն տեսներ այն բաները որոնց համար կոչուած են...ամէնէն գէշ հոգեւորականներ են: Եթէ չունին իրենց ըրածին ու նոյնիսկ պաշտածին, Աստուծոյ հաւատքը, այն ատեն այդ մարդերը ահաւոր խղճալի մարդեր են»:

Հոգեւորականը, հետեւաբար, հոգիի, ճաշակի ու ազնուականութեան մարդն է: Եթէ եկեղեցականը գիտակից է իր կոչման եւ ունի ազնիւ ու անսակարկ նուիրում իր սուրբ աշխատանքին, այդպիսին «սքանչելի կերպով կը կրէ իր սքեմը», եւ կարեւորութիւն չ'ընծայիր այլոց չար մտածումներուն, նենգ արարքներուն, անտեղի քննադատութիւններուն, որովհետեւ անոնք «չեն գիտեր թէ ինչ կ'ընեն»: Մեր Տէրը եւս, տառապալի խաչէն իր բարձրօգութեամբ աղաղակեց. «Հայր, ներէ՛ անոնց, վասնզի չեն գիտեր թէ ի՛նչ կ'ընեն»: Այստեղ վրէժնադրութիւն չկայ, այլ միայն՝ վեհանձնութիւն: Ան «երբեք չ'ա-

տեր զանոնք, այլ կը ջանայ փրկել զանոնք՝ իրենց ցած վիճակէն»։ Նոյնանման ոգի կը գտնենք նաեւ Փրանսացի մեծ գրող՝ Վիկտոր Հիւկոյի «Թշուառները» նշանաւոր վէպին մէջ, ուր կը նկարագրուի Ժան Վալթանի եւ բարեսիրտ ու վեհանձն Եպիսկոպոսի հանդիպումը։ Աղքատ Ժան Վալթան, Եպիսկոպոսի տունէն արծաթեղէններ գողնալէ ետք, ոստիկաններուն կողմէ բռնուած ու ետ բերուած էր։ Եպիսկոպոսը ժպտալով հրամայած էր ոստիկաններուն անմիջապէս ազատ արձակել զինք, ըսելով՝ հոս բերելով «սխալեր էք»։ Ժան Վալթանի մեկնումէն առաջ, Եպիսկոպոսը հանդիսաւոր շեշտով մը ըսած էր անոր. «Ժան Վալթան, եղբայր իմ, ալ չարութեան ճամբէն ելլար եւ բարութեան ճամբան մտար։ Հոգիդ գնեցի, սեւ գաղափարներէ եւ կորստեան ոգիին ձեռքէն ազատելով Աստուծոյ յանձնեցի զայն»։ Աւելորդ է ըսել, որ այդ խօսքերուն չ'ընկերանար ոչ մէկ յանդիմանութիւն, ընդհակառակը, կը տեսնենք՝ ներում, կարեկցութիւն եւ առաջնորդութիւն դէպի մարդկային փրկութիւն եւ արժանապատուութեան վերակերտում։ Ահա այսպիսի բարձր ճաշակի ու հազուագիւտ ազնուականութեան կ'ակնարկէ Շահան Պէրպէրեան։

Եկեղեցականը կոչուած է դառնալու արդիական մարդը, որ է ըսել՝ ըլլալ հաղորդ հասարակութեան ու անմիջական շրջանակի փոփոխութիւններուն, զարգացումներուն ու գիտական նուաճումներուն։ Քաջ ու շրջահայեաց հովիւը տեղեակ է «իր ժամանակի հարցերուն եւ համամարդկային ցաւերուն», եւ չի սոսկար գիտութենէն, ընդհակառակը, ամէնէն առաջ ինք կ'ողողուի դէպի գիտութիւն, կը հասկնայ ու կը գնահատէ անոր դրական արդիւնքները եւ կը քաջալերէ անոնց ճիշդ օգտագործումը։ Գիտութեան ակնադբիւրէն բխած բոլոր բարիքները ան կը ներառէ իր կեանքէն ներս ու կը ջանայ այդպէսով թեթեւցնել ծանր լուծը իր ժողովուրդին։ Հետեւաբար, ան գիտութեան ջատագով է ու զօրեղ պաշտպան։

Ի՞նչ է հայութիւնը կրօնաւորին համար, եթէ ոչ՝ իր էութիւնը, բովանդակ կեանքը։ Հայ կրօնաւորին գործը եղած է միշտ փշոտ ու խութերով լի։ Դարերով, եկեղեցականը անբաժան եղած է իր ազգէն՝ միշտ զօրավիզ կանգնելով անոր՝ իր բոլոր տրտմութեանց ու նեղութեանց պահերուն։ Ազգին ցաւերով կոտտացող ու տուայտող եկեղեցականը ունեցած է դժուարին առաքելութիւն. անոր հիմնական մտահոգութեան, սիրոյ ու գուրգուրանքի առարկան եղած է հայ ժողովուրդը, անոր բարեք կեանքը։ Ան ամօքած է հայուն վիշտը, մատուցած սպեղանի իր կարեւոր սրտին, «անոր տառապանքի օրերուն քաջութիւն եւ յոյս ներշնչողները ... հոգեւորականները եղած են։ Հետեւաբար, հոգեւորականութեան աւանդութիւնը յաղթանակի մը հպարտութիւն կը բերէ իր հետ», պիտի ըսէր Շահան Պէրպէրեան։ Եկեղեցականը քաջ համոզուած է, որ կեանքի մանուածապատ հարցերէն խուսափումը լուծում չէ բնաւ, այլ անոնց դիմակայումը եւ ճակատաբաց յաղթահարումը լաւագոյն գրաւականն է եկեղեցականին հաւատքի զօրութեան, հայասիրութեան ու արդիականութեան։

Հայ եկեղեցականին կոչումին անբաժանելի մասը կը կազմէ իր ժողովուր-

դին կրթութիւնը, դաստիարակութիւնը, բարոյական բարձրացումը, անոր հոգիին բերեցողացումը, ազնուացումը: Լիթուանացի մտաւորական եւ գրող՝ Էտուարտաս Մէժլայտիս, պիտի ըսէր. «Գիշերուանից դէպի ցերեկը, Անգոյութիւնից դէպի Մեծ Գոյը» առաջնորդող ճամբայ մը կայ: Անտարակոյս, մեր իրականութենէն ներս. այդ ճամբու գլուխը իբրեւ իմաստուն առաջնորդ կանգնած է նուիրուած Հայ եկեղեցականը: «Ով գիշերային տանջանքներ չի կրել, նա մինչեւ վերջ չի ճանաչել նաեւ ծագող արեւի բերկրանքը»: Հայ հոգեւորականը իր ժողովուրդին հետ անցած է մահուան ձորէն, տոկացած է դարերու ամեհի հարուածներուն եւ յուսադրած իր ազգը գալիք լաւագոյն օրերով:

Եկեղեցական ասպարէզը հասարակ՝ շահ ու հանգստի ասպարէզ չէ: Շահան Պէրպէրեան կը զգուշացնէ նոր սերունդը հետեւեալ իմաստուն ու խրատական խօսքերով. «Ով որ չունի այդ մեծ խանդը, հաւատքը չունի հոգիին, պէտք չէ մօտենայ հոգեւորականութեան սեմին նոյնիսկ, որովհետեւ ատիկա ասպարէզ մը չէ ուր ուզողը կարենայ մտնել, միայն ննջեցեալ մը թաղելու կամ նոր ծնած մանուկ մը աւագանը կոխելու համար: Եւ կամ ձրի կեանք մը անցընելու համար չէ այդ ասպարէզը: Այս տեսակ եկեղեցականն աւելի իրաւ մարդ մըն է դուրսի կօշկակարը որ իր ասպարէզը ըրած է ատիկա ու հոգիովը կ'աշխատի հացը հանելու համար»:

Ինչքա՞ն ճիշդ է Պր. Պէրպէրեան, երբ կը գրէ. «Հոգեւորականութիւնը ... Յոյսի, Սիրոյ, Հաւատքի գործն է»: Այս քաղցր լուծը տանելու համար, հետեւաբար, հարկ է գօտեպնդուիլ հաւատքով, յոյսով ու սէրով:

ԶԵՆՈՒ Ա. ՔԷՆՅ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ



ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ

Մեր պատմագէտ ուսուցիչը՝ Պր. Բիւզանդ Եղիայեան, Գարեգին Վեհափառ Յովսէփեանցէն իմացած եւ գրի առած է դրուագ մը, որ կապուած է «Լուսաւորչի կանթեղ»ի աւանդութեան: Հայ ժողովուրդը դարեր շարունակ հաւատացած է, որ Արագած լեռան կատարին միշտ տեսանելի եւ քաղցրօրէն պլպլացող «Աստղը» Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռքով իսկ վառուած, իր «կանթեղն» է մշտավառ:

Գարեգին Վեհափառ Յովսէփեանց պատմած է, որ «Լուսաւորչի կանթեղի» այս աւանդութիւնը ինք կարդացած է հին հայկական ձեռագրի մը յիշատակարանին մէջ:

Վեհափառը, իր Թիֆլիս քաղաքի առաջնորդութեան օրերուն՝ այս դրուագը պատմած է մեր մեծանուն բանաստեղծ Յովհաննէս Թումանեանին:

Յովհաննէս Թումանեան, ամբողջ գիշեր մը արթուն մնացած եւ գրած է «Լուսաւորչի կանթեղը» խորագրով իր անմահ այս քերթուածը.

Կէս գիշերին կանթեղը վառ
Կախ է ընկած երկընփից,
Լուսաւորչի կանթեղն անմար
Հայոց մթնած երկնփից:

Կախ է ընկած առանց պարան
Արագածի կատարին,
Ու խորանից հսկայական
Լոյս է տալիս աշխարհին:

Լոյս է տալիս երկա՛ր դարեր
Ու վառուում են միշտ անշէջ
Սուրբի մաքուր արցունքները
Իւրի տեղակ նըրա մէջ:

Ոչ մարդկային ձեռ կը հասնի
էն ահաւոր բարձունքին,
Եւ ոչ քամին կը հանգցընի՝
Վիշապ-քամին ահագին:

Երբ պատում է մութ խաւարը
Զընաշխարհիկ մեր երկրին,
Երբ տիրում է ահն ու վախը
Թոյլ, կասկածոտ սրտերին,—

Ով անմեղ է լիքը սիրով
Ու հաւատով անասան,
Ով նայում է վառ յոյսերով
Դէպի հայոց ապագան, —

Նա կը տեսնի էն մշտավառ
Ջահը կախուած երկնփից,
Ասես՝ Աստծու աչքը պայծառ
Հսկում է ցած երկնփից:

Ամէն հայու սրտին խօսող այս սքանչելի քերթուածին վրայ մեղեդի յօրինած է մեր իմաստասէր ուսուցիչը՝ Շահան Պէրպէրեան: Նոյն բանաստեղծութեան վրայ մեղեդի յօրինած է նաեւ մեր երաժշտագէտ ուսուցիչը՝ Համբարձում Պէրպէրեանը:

Ամէն ժողովուրդ ալ ունի «լապտերի», «լամբի» եւ «լոյսի» մասին աւանդութիւններ եւ աւանդալէպեր:

«Լուսաւորչի կանթեղ»ի աւանդութիւնը մեզի համար ամենէն յանկուցիչն է եւ ամենէն թանկագինը:

Այն կը խորհրդանշէ մշտավառ «Հայ հոգին»: Այն կը խորհրդանշէ հայ ժողովրդի յաւիտենականութիւնը եւ դեռ՝ «հօրն մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի» կողմէ նուիրագործուած, Աստուծոյ հսկողութիւնը Հայաստանի վրայ:

ԹՈՐԳՈՄ ՓՕՍԹԱՃԵԱՆ
(Մեծերու հետ եւ Մեծեր)

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Քեզի համար սիրտըս բիւրեղ,
Հայելի մ'է լուսայատակ,
Որուն խորքին մէջ դուն յաւէտ,
Ժըպիտներով մայրագորով,
Պիտի շողաս, բոցավատիս,
Ո՛վ անոյշ դէմք հայրենիքիս:

Իսկ թէ երբեք դաժան ձեռքեր,
Ուզեն փշրել սիրտըս բիւրեղ,
Ո՛հ այն ատեն հազար շողով,
Սրտիս մէն մի փըշուրին մէջ,
Պիտի շողաս, ժպտիս նորէն,
Ո՛վ հայրենի դէմք լուսեղէն:

Քու վերելքիդ ու հանճարիդ,
Քու լուսագարդ ապագայիդ,
Յոյսըս հասկ մ'է, որ կաթոգին,
Օտարաբոյր հողի վըրայ,
Կը հասուննայ քեզի համար,
Ո՛վ հայրենիք կարօտավառ:

Իսկ թէ երբեք սեւ սմբակներ,
Ուզեն ֆակտել հասկը յոյսիս,
Ո՛հ, այն ատեն մէկի փոխան,
Հազար հասկեր պիտի ծըլին,
Քու վերելքիդ, յաղթանակիդ,
Քու բազմաշող անմահ փառքիդ:

Հ. ԵՓՐԵՄ ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ

ԱԶԳԻՍ

Քալէ՛ ազգ իմ, քալէ յառաջ,
Առուակի պէս լուսակարկաչ .
Հոսէ՛ հսկայ սարէ ի սար,
Հոսէ՛ անվախ ձորերն ի վար .
Փուշերուն դէմ, խութերուն դէմ,
Սուրա՛ յառաջ ծիծաղադէմ :
Որքան հսկայ ժայռեր ցըցուին :,
Քու փրփրահեր լայն նակատին՝
Որքան խորունկ վիհեր բացուին,
Քու նամբայիդ լար շրթունքին,
Յոյսով եմ թէ օր մը յանկարծ
Պիտի դառնաս ծով մը փրփրած,
Զի քու սրտիդ ակը քընար,
Ունի իր մէջ կեանք անսպառ :

Հ. ԵՓՐԵՄ ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ

Նուիրատուութիւններ «Լոյս»ին

Սեդա Թելեան	50 տոլար
Տ. Տ. Միհրան Մերգիբեան	25 տոլար
Մանուէլ Շէիբեան	100 տոլար
Փրոֆ. Շաֆէ Մինասեան	100 տոլար
Էտուար Թահմազեան	50 տոլար
Յակոբ Ասքարեան	50 տոլար
Տ. Տ. Յակոբ Մանուկեան	100 տոլար
Յարութիւն Մենչերեան	50 տոլար
Ալէքս Տարեան	50 տոլար
Լեւոն Թուտնեան	40 տոլար
Տ. Տ. Արքահամ Պզտիկեան	50 տոլար
Տ. Տ. Գալուստ Պապեան	25 տոլար
Կարպիս Քէթննեան	50 տոլար
Տ. Տ. Սուրէն եւ Արմինէ Մաղաֆեան	100 տոլար
Տիան Թագլորեան	50 տոլար